Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

5(579)
25.02.2020
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԻՐԵՐԸ ՊԻՏԻ ԿՈՉԵԼ ԻՐԵՆՑ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Ադրբեջանի իշխանություններն սկսել են հաճախակի շրջանառել 1992 թվականի փետրվարին տեղի ունեցած Խոջալուի իրադարձությունները՝ դրանք որակելով հայերի կողմից կատարված ցեղասպանություն: Ինքնին հասկանալի է, որ այդ ամենն արվում է Սումգայիթի թեման միջազգային հանրության ուշադրությունից շեղելու համար: Իսկ որ 1988-ի փետրվարի 27-29-ը Սումգայիթ քաղաքում կազմակերպված հայկական ջարդերը դասակարգվում են ցեղասպանության կատեգորիայի տակ, փաստվում է բազմաթիվ վկայություններով ու տեսագրություններով: Այն Մոսկվայի թողտվությամբ իրականացրել էին Ադրբեջանի իշխանությունները:

Ըստ Միավորված ազգերի կազմակերպության 1948 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, ազգային, կրոնական կամ էթնիկ խմբի մասնակիորեն կամ ամբողջությամբ մտադրված համակարգված ոչնչացումն է որևէ պետության ներսում: Խոջալուն ադրբեջանաբնակ գյուղ է եղել նախկին ԼՂԻՄ-ի կազմում, և եթե հարևան երկրում գտնում են, որ այդտեղ տեղի է ունեցել ցեղասպանություն, ապա նախ պիտի հստակեցնեն, թե ում կողմից է դա իրականացվել: Բնականաբար, շրջափակման մեջ գտնվող Արցախում Հայաստանը գործնականում չէր կարող նման բան անել: Իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, թեպետ տվյալ ժամանակաշրջանում արդեն հռչակված էր իբրև անկախ պետություն, սակայն դե յուրե Ադրբեջանը չէր ճանաչում նրա գոյությունը: Ո՞վ էր, ուրեմն, խոջալուեցիների սպանության բուն հեղինակը: Դարձյալ ու կրկին գալիս հանգում ենք Ադրբեջանի անմիջական դերակատարությանը, հակառակ պարագայում Բաքվի իշխանությունները պարտավորաբար պիտի ճանաչեն ԼՂՀ-ն ու նոր միայն նրան ամբաստանեն ցեղասպանություն կազմակերպելու մեջ: Միայն Արցախի սուբյեկտայնությունը ճանաչելու դեպքում է հնարավոր քննել Խոջալուի դեպքերի իրավական և քրեական ասպեկտները, թեպետ առկա վավերագրերը բացառում են որևէ հայկական հետք:

Բոլորին է հայտնի, որ այդ ժամանակահատվածում Խոջալու գյուղը վեր էր ածվել ազերական ռազմաբազայի, որտեղից պարբերաբար հրետակոծվում ու արկակոծվում էին շրջակա հայկական բնակավայրերը՝ սպանելով խաղաղ բնակիչների, ոչնչացնելով նրանց գույքը: Հայ ինքնապաշտպաններին այլ բան չէր մնում անելու, քան վնասազերծել հակառակորդի կրակակետերը: Ընդ որում՝ նախապես միջանցք էր տրամադրված Խոջալուի բնակիչներին, որպեսզի նրանք կարողանան ռազմական գործողությունների գոտուց անվնաս դուրս գալ: Ադրբեջանցի լրագրող Չինգիզ Մուստաֆաևը նկարահանումներ էր կատարել դեպքի վայրում, որոնք պարզ փաստում են, որ խաղաղ խոջալուեցիներին կոտորել են Աղդամում տեղակայված զորամիավորման մարտիկները: Իսկ թե ինչու, դրա ստույգ պատասխանը տվել է Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մութալիբովը «Նեզավիսիմայա գազետա»-ին տված հայտնի հարցազրույցում, որում նա մեղադրում է Ադրբեջանի արմատական ընդդիմությանը՝ ի դեմս ժողճակատի: Ճիշտ է, հետագայում նա հերքել է, որ նման բան է ասել, սակայն հիշյալ հարցազրույցի հեղինակ Դանա Մոզալովան օրերս վերստին հաստատել է հարցազրույցում հնչած խոսքերի իսկությունը: Զարմանալի չէ, որ էքս նախագահն իր հրապարակային պնդումները հերքել է 2011 թվականից հետո, երբ Իլհամ Ալիևը նրան Բաքվում անվտանգության և բարեկեցության շնորհ է արել: Ինչո՞ւ մինչ այդ նա որևէ հերքում չի արել: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Բոլոր ցեղասպանությունները, անկախ ժամանակից ու վայրից, պետք է համընդունվեն ու համապատասխան գնահատականի արժանանան: Այդ թվում՝ Խոջալուն և Սումգայիթը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Ռուբեն Սեվակ -135

ԿԻԼԻԿՅԱՆ ԵՐԳԵՐ

ՎՐԵԺԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Քե՛զ, ցասումի վայրագ հեղեղ գահավեժ,
Արդարության փայփայելի մո՜ւթ հըրեշ,
Խավարներու ահե՛ղ ծընունդը, Վրե՛ժ,
Ողջո՛ւյն, տաղե՜րս քեզի՛…

Մոխրի՜ն կուտամ սրտիս վերքերն ախտագին…
Ամենո՛ւն վերքն, անսահմա՜ն վերքը ազգին,
Արդարության ծարա՛վը, մա՛հն հավատքին,
Երգին՝ տաղե՜րըս քեզի՛…

Ու ես կուգա՜մ.- Մութ շանթերու սերմնացան -
Այդ ակոսեն, ուր արյուններ լճացա՜ն,
Գիշերներով, չար հովերով, ցիրուցա՜ն,
Ցանել՝ տաղե՜րս քեզի…

Բաբե՜, եթե այս բազուկս կարևեր
Չը սորվեցավ զարնել… Գոնե անվեհեր
Ցանքես Մահու առաքյալնե՜ր, հսկանե՜ր
Կը ծնին՝ տաղե՜րըս քեզի…

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՐ

Օրո՜ր, օրո՜ր… օրո՜ր ըսեմ՝ քնանաս,
Վիրավոր հորըդ ճիչերն ա՜լ չիմանաս,
Ցիծես ծըծածըդ թույն է… կաթ չի գիտնաս…
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս:

Արյուն հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախի՛ս, փարե՛ երկրիդ, զայն սիրե՛,
Հողիդ վրա գերի մ՚ըլլար, այլ տիրե՛…
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս:

Հորըդ վըրա եթե անշո՜ւնչ չինկա ես,
Ձի ուխտեցի՛ Հռոմի էգ գայլին պես
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքես…
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս:

Բազուկներուս պարա՜ն, ոտքիս ալ կացի՜ն,
Ստինքիս զո՜ւյգ պտուկներն ալ կտրեցին:
Վերքես արյունս ծծե, որդյակ միածին…
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս:

Ահա կ՚իյնամ… Հայաստանը մա՜յր քեզի,
Կտակ կուտամ այս կոտրած սուրն երկսայրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կ՚այրի…
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս:

ԱՄՓՈՓՎԵՑ ԱՐՊՀ-ՈՒՄ 2018-2019 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Փետրվարի 20-ին տեղի ունեցավ Արցախի պետական համալսարանի խորհրդի նիստը, որն ամփոփեց 2018-2019 ուսումնական տարում ԱրՊՀ-ում կատարված աշխատանքները: Նիստը սկսվեց խորհրդի նախագահ, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանի՝ Արցախի վերածննդի օրվա առթիվ ներկաներին շնորհավորանքով:

Հաշվետու տարում կատարած աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ ռեկտոր Արմեն Սարգսյանը:

Ըստ բանախոսի՝ Արցախի մայր բուհն իր գործունեությունը կազմակերպել և իրականացրել է անցած տարվա խորհրդի նիստում հաստատված՝ ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին և նպատակներին համապատասխան: «Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին՝ արդյունավետ աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, կրթության բովանդակության հարստացման, դասավանդման որակի բարձրացման, մեթոդների արդիականացման և այլ ուղղություններով»,- ասաց նա՝ առանձնացնելով ամենակարևորները:

Ըստ այդմ՝ համալսարանի պատմության մեջ նորություն էր ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, որի ուղղությամբ նախապատրաստական լուրջ աշխատանքներ են կատարվել: Արդյունքում 2019թ. հոկտեմբերի 16-ին ԱրՊՀ-ն հավատարմագրման դիմում-հայտ է ներկայացրել ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն:

2018-2019 ուստարում բակալավրիատի ուսանողների թիվը կազմել է 2066, մագիստրատուրայի ուսանողներինը՝ 353, ասպիրանտներինը՝ 8: Հաշվետու շրջանում ԱրՊՀ-ն տվել է բակալավրիատի 527, մագիստրատուրայի՝ 162, ասպիրանտուրայի՝ 3 շրջանավարտ, համապատասխանաբար ընդունվել են բակալավրիատի՝ 591, մագիստրատուրայի՝ 185, ասպիրանտուրայի՝ 5 դիմորդներ:

Բանախոսը մեր պայմաններում բավականին բարդ համարեց գիտական գործունեության ասպարեզում ԱրՊՀ՝ որպես գիտական առաջատար օղակի կայացումը, կրթական և գիտական գործունեության հավասարակշռումը: Համալսարանի ռազմավարական ծրագրով կարևորվել են գիտական գործունեության զարգացմանն ուղղված աշխատանքները՝ նպատակ հռչակելով «Տարածաշրջանային հետազոտությունները Արցախի հիմնախնդիրների լուծման գերակայությամբ»: Այդ նպատակին հասնելու համար առանձնացված խնդիրների լուծման ուղղությամբ ռեկտորը մատնանշեց գիտության համար նախատեսվող պետական հատկացումների ավելացումը՝ նախորդ տարիների համեմատ՝ եռակի: Բուհի ղեկավարն ընդգծեց, որ Արցախի գիտական կենտրոնում իրականացվող պայմանագրային գիտական թեմաների գերակշիռ մասի ղեկավարներն ու կատարողներն ԱրՊՀ դասախոսներն են, իսկ որոշներում ընդգրկված են նաև ասպիրանտներ ու մագիստրանտներ:

Այնուամենայնիվ, առկա են բազմաթիվ խնդիրներ. «Գիտությունը երիտասարդ կադրերին չի հրապուրում, տնտեսությունից առանձին հետազոտական պատվերներ չենք ստանում, հակակալություն հայտնեց հանրապետության նախագահին, Նախագահի աշխատակազմի ղեկավարին, ԱրՊՀ խորհրդի նախագահին, ԱՀ օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին, ԿԳՍ նախարարությանը, ինչպես նաև արտգործնախարար Մասիս Մայիլյանին, որի նախաձեռնությամբ ու միջնորդությամբ եվրոպական կրթական հիմնադրամներից մեկը ֆինանսավորել է համալսարանում իրականացված մի քանի ծրագրեր: Դրանց արդյունքում ԱրՊՀ-ում ստեղծվել է նորարարական տեխնոլոգիաներով հագեցած կենսաբանության լաբորատորիա, հիմնադրվել է տպարան, իրականացվել են «Հոգեբանական կենտրոնի զարգացում», «Ուսանողների և դասախոսների ուսումնագիտական գործուղումներ», «Մարզական գույքի ձեռքբերում», «Ամառային դպրոցի կազմակերպում», «Դասախոսների և ուսանողների որակավորում», «Կենսաբանության արդիականացումն Արցախում», «Բուհ-գործատու հետազոտություն» ծրագրերը:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներում ամենաակտիվը ուսումնագիտական և ճանաչողական միջոցառումներն էին:

Ձեռքբերումներով և կատարված աշխատանքի մեծ ծավալով հանդերձ համալսարանում լուծման կարիք ունեն մի շարք խնդիրներ. բարելավման կարիք ունեն մասնագիտական կրթության որակի ներքին և արտաքին գնահատման համակարգերն ու մեխանիզմները, թույլ է կրթության և տնտեսության միջև կապը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները, համալսարանի սահմանափակ ֆինանսական հնարավորությունները թույլ չեն տալիս լուրջ ներդրումներ կատարել գիտության զարգացման, դասախոսների վերապատրաստման, համալսարանի տեխնիկական հագեցվածության մակարդակում թռիչք ապահովելու, հրատապ այլ խնդիրներ լուծելու համար և այլն:

Հաշվետվության կապակցությամբ ռեկտորին հարցեր ուղղեցին ԱՀ էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարար Լևոն Գրիգորյանը, կրթության, գիտության և սպորտի նախարար Նարիսե Աղաբալյանը: Համալսարանի խնդիրներն ըստ ֆակուլտետների իրենց ելույթներում մատնանշեցին դեկաններ Շահեն Այդինյանը, Ռուզաննա Մանգասարյանը: Ձեռքբերումներն առանձնացրին ԿԳՍՆ մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչ Լուսինե Ղարախանյանը, ուսխորհրդի նախագահ Լիլիթ Մարգարյանը:

Կատարված աշխատանքը գնահատվեց բավարար: Ի գիտություն և ի հաստատումն ընդունվեց ԱրՊՀ ֆինանսական տարվա հաշվետվությունը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՅՐԵՆԻԻ ՄԻԱՄՍՅԱԿ

ՄԵՐ ԱՆԱՂԱՐՏ ԵՐԹԻ ՊԱՀԱՊԱՆԸ

Մաշտոցյան գրի լույսով ճառագած՝ հայ ժողովուրդն անցավ բազում դարերի խավարի ու տառապանքի միջով, աղետների, ավարների ու թալանի միջով, բայց երբեք չկորցրեց իր անգնահատելի ու անկողոպտելի գանձը՝ մայրենին: Այդ լեզուն է, որ բացում է հաղորդակցության դռները սեփական ու հարազատ մշակութային ավանդույթների և ժառանգության, նույն լեզվով խոսող ընդլայնված շրջանակի հետ, որ կոչում ենք ազգ: Հայ մայրն իր կաթի հետ նաև մայրենին պահ տվեց իր մանկանը, որ դարեդար հոսեց հայ մանուկների երակներով՝ դառնալով ապացույցը մեր նոր ինքնության: Դարերով խշշաց մայրենին նահիրյան դալար բարդու պես, մաքառեց բազում գոյամարտերում ու Մաշտոցով օծված՝ հաղթական երթով հասավ մինչև մեր օրերը: Հայերենը ներշնչանքի աղբյուր է, մի անգնահատելի գանձ, որ միմիայն ինքնամոռաց սիրո ու գորովանքի է արժանի, նրա կրողը լինելու բարձր ու զգոն գիտակցության: Ուրեմն պահպանել է պետք դարերի ճամփորդ դարձած այդ լեզուն ու հոգալ նրա մաքրության և հարստության համար, լինել նրա գրագետ կրողն ու փոխանցողը, որպեսզի հետագայում երբեք պայքարով ու արյամբ այն հետ նվաճելու առիթ չունենանք:

Այս գիտակցումով էր Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում կազմակերպված «Մայրենիի շաբաթը»՝ Մայրենիի միամսյակի շրջանակներում: Այն կազմակերպվել էր դպրոցի փոխտնօրեն (կազմակերպիչ) Աիդա Գյանջումյանի ու մայրենիի նվիրյալների, դասղեկների տքնաջան աշխատանքով: Ողջ շաբաթվա ընթացքում՝ բոլոր օրերին, Աիդա Գյանջումյանն էր վարում միջոցառումը, որը հետևողականորեն մի նպատակ էր հետապնդում՝ հազարագանձ հայերենով վարակել նոր սերնդին, ներշնչանքի ու սխրանքի աղբյուր դարձնել այն ու մղել նոր բարձունքների, նոր պարտավորվածության: Մայրենի դասավանդող ուսուցիչներն ու դասղեկները ևս մեծ պատասխանատվությամբ էին նախապատրաստվել այս մրցույթին:

Մայրենիի շաբաթվա առաջին օրը սկսվում է հայերենի այբուբենի տառերով աղոթքով ու Աիդա Գյանջումյանի բացման խոսքով: Միջոցառման լավ սկիզբը հաջող ընթացք էր խոստանում: Ընտրվեց հանձնախումբ՝ չորսհոգանոց, որի կազմում էին նաև դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանն ու փոխտնօրեն Մելանյա Սարգսյանը: Միջոցառմանը մասնակցում էին 5ա, 5բ, 6ա, 6բ, 7ա, 7բ դասարանները՝ 102 աշակերտ: Մեկնարկի օրը նրանք ներկայացրին մեկական ողջույնի խոսք ու ասմունք, որոնք ընդմիջվում էին երաժշտական համարներով: Երգը, երաժշտությունը, պարը, ախորժելի մայրենի բարբառը միահյուսվել ու դարձել էին մի հրաշալի համանվագ:

Հանձնախմբի գնահատմամբ՝ առաջին օրը համեմատաբար հաջող հանդես եկան 5ա (6 միավոր), 5բ (4,5 միավոր) և 7ա (4 միավոր) դասարանները: Այդ օրը երեխաները կարևորեցին մի հանգամանք. պետք է պայքարել մայրենիի համար. չէ՞ որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 1999թ. նոյեմբերին ընդունած որոշման հիմքում ընկած էր մի կարևոր դրդապատճառ՝ 1952թ. Դաքքա քաղաքի ուսանողների պայքարը ի պաշտպանություն մայրենիի՝ բենգալերենի, պայքար, որն ուղեկցվում էր բախումներով ու զոհերով, սակայն հաղթական ավարտ է ունենում և ավելին՝ ազգային ինքնագիտակցության զարթոնքի սկիզբ դառնում Արևելյան Պակիստանի ժողովրդի համար: Մասնակիցներն ի գիտություն ընդունեցին, որ լեզուն պետք է բարձր ու վճիտ պահեն Արարատի սուրբ ձյունի պես և սրտին մոտիկ՝ պապերի աճյունի պես:

Առաջին օրվա արդյունքներն ամփոփելիս դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանը խորհուրդ տվեց ուսուցիչներին և աշակերտներին ուշադրություն դարձնել հատկապես արտահայտիչ ու տպավորիչ խոսքին. չէ՞ որ ասմունքն էլ արվեստ է:

Միջոցառման երկրորդ օրը բացվեց իններորդ դասարանի աշակերտուհի Էլեն Թովմասյանի «Մեսրոպ Մաշտոց» հմայիչ երգով՝ նվիրված հայոց տառերին: Առաջադրանքները հանձնարարվեցին հնչյունաբանությունից (լրացնել բաց թողնված տառերը), բառագիտությունից (լրացնել բաց թողնված բառերը), շրջասույթներից (բացատրել

դրանք) և շարահյուսությունից (վերադասավորել բառերը՝ վերականգնելով նախադասությունը): Հիմնականում ընտրված էին ժողովրդական բառ ու բանից, առած-ասացվածքներից: Այնպես էր կազմակերպված, որ մրցույթին մասնակցեն ոչ միայն ուշիմ աշակերտները, այլև անխտիր բոլորը, որպեսզի յուրաքանչյուր երեխա պարտավորվածություն զգա իր թիմի հաջողությունների համար:

Երկրորդ օրվա արդյունքներով համեմատաբար բարձր միավորներ վաստակեցին 7բ (10,65), 5բ (9,9), 6ա (9,1) դասարանները:

Մրցույթի երրորդ օրվա համար աշակերտների առջև ուրիշ առաջադրանքներ էին դրված. գտնել տրված բառի հոմանիշները, բացատրել դարձվածքները, շարունակել ժողովրդական ասացվածքները և սովորողների ընթերցանության տեխնիկայի զարգացում:

Երեխաներն աշխատում էին, ինչպես մեղուները փեթակում: Օրվա համառ պայքարից հաղթող դուրս եկան 5ա և 6բ դասարանների աշակերտները՝ վաստակելով հավասար միավորներ (2,4): Խրախուսանքի արժանի է հատկապես այն հանգամանքը, որ երեխաները մեծ ակտիվություն ցուցաբերեցին դարձվածքները բացատրելիս և ժողովրդական ասացվածքները շարունակելիս, ինչը փաստում է, որ մեր ուսուցիչները ևս համամիտ են թումանյանական այն համոզմանը, թե ժողովրդական «բանահյուսությունն այն աղբյուրն է, որից ամեն բանաստեղծ ջուր է խմում»: Իրոք, դա այդպես է, որովհետև այդ աղբյուրը չափազանց անաղարտ է, պարզ ու վճիտ, ինչպես լուսե արցունքը մանկան... Չէ՞ որ այն ավելի ճշգրիտ է արտահայտում ժողովրդի մտածողությունն ու հոգեբանությունը:

Չորրորդ օրվա մրցույթը սկսելուց առաջ Աիդա Գյանջումյանը խրախուսական խոսքով շնորհավորեց նախորդ օրվա հաղթողներին: Այս օրվա համար էլ նախատեսված էր չորս առաջադրանք՝ բառքամոցի, շարունակել ասացվածքը, շարունակել նախադասությունը, կռահել հանելուկները (Շնորհալի):

Երեխաներն առանձնապես լավ էին շարունակել *Ընկերներիդ հետ աշխատելիս..., Թիմային հաջող աշխատանքի համար..., Ծնողների հետ զրույցը..., Եթե ուզում ես, որ ... նախադասությունների և Ծառի տակ պառկողի բերանը..., Չեռը ծեռք կլվանա, ..., Մի ծաղկից օձը թույն է շինում, ..., Աջով տուր, որ ..., Աշխարհի շինողն ու քանդողը ..., Ամառվա փուշը...* հայկական ժողովրդական ասացվածքների մտքերը: Լավ էին գուշակում նաև Շնորհալու հանելուկների իմաստը:

Հանձնախումբը ամփոփում է նաև այս օրվա արդյունքները. աչքի էին ընկել 5ա և 6ա դասարանների աշակերտները՝ համապատասխանաբար վաստակելով 8,1 և 7,8 միավորներ:

Միջոցառման հինգերորդ օրը բացվում է մայրենիին նվիրված փառաբանական խոսքով: Յուրաքանչյուր դասարան փորձում էր դրանով առավել ևս ընդգծել իր նվիրվածությունը մայր լեզվին ու տեսնել նրա հրաշագործ ու ազգափրկիչ առաքելությունը:

Այնուհետև մրցասպարեզը տրամադրվում է ազգագրական երգ ու պարով հանդես եկող դասարաններին: Միահյուսվում են արվեստի՝ գեղագիտական ճաշակ ձևավորող տարբեր ճյուղեր՝ հաճելի ակնթարթներ պարգևելով ներկաներին: Այս գործում մեծ է ներդրումը

Ասկերանի ՄՊՍԿ-ի տնօրեն Մերի Գաբրիելյանի կողմից, որը ջանք ու եռանդ չէր խնայել մեկ ամիս տևող այս միջոցառումը գեղաշուք դարձնելու համար:

Երրորդ առաջադրանքը թևավոր արտահայտություններից էր: Սովորողները պետք է բացատրեին հնչած թևավոր արտահայտության իմաստը: Այսպես, օրինակ՝ Արգոսի (արգոսյան) աչքեր. - պատասխան՝ խուզարկու՝ հետևող՝ հետապնդող աչքեր: Եվ ոչ միայն: Նրանք պետք է բացատրեին նաև, թե որտեղից է ծագել. = Ըստ հունական դիցաբանության՝ Արգոսը հարյուրաչքանի, օձի կերպարանքով մազեր ու պոչ ունեցող հրեշ է, որին Զևսի կինը հանձնարարել էր հսկել ամուսնու սիրուհուն: Պատկերում է էսքիլեսն իր «Պաշտպանություն աղերսողները» ողբերգության մեջ: Կամ՝ Արիադնայի թել (եր) - Դժվարին վիճակից դուրս գալու, կնճիռը լուծելու միջոց, հնար: Ծագումը. = Ըստ հունական դիցաբանության՝ Թեսեոսը Կրետեի արքայի դստեր՝ Արիադնայի տված թելերի (պարանի) օգնությամբ է, որ Մինոտավրոս մարդակեր հրեշին սպանելուց հետո կարողանում է լաբիրինթոսից դուրս պրծնել:

☞ 6

Նվիրյալներ

ՖԻԶԻԿԱՆ ԻՄ ՏԱՐԵՐՔՆ Է...

Այսպես է արտահայտվում ֆիզիկայի մասին Սզնեքի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ, ԱՀ վաստակավոր մանկավարժ Շահեն Մարգարյանը: Նա մարդկային բարձր արժանիքներ կրող հիանալի մանկավարժ է՝ անմնացորդ նվիրված իր գործին: Շ. Մարգարյանը ծնվել է Ասկերանի շրջանի Ն. Սզնեք գյուղում 1949թ. փետրվարի 2-ին: Սովորել և ավարտել է տեղի դպրոցը (1955-1966թթ.) և 1966թ. ընդունվել Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետը: Ավարտելով այն՝ անմիջապես աշխատանքի է անցել Ասկերանի շրջանի Խրամորթի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: 1971-1972թթ. ծառայել է Էստոնիայում՝ խորհրդային բանակում (նույնիսկ բանակում ծառայելու ժամանակ, անչափ սիրելով ֆիզիկան, պարապում էր նորակոչիկների հետ, որոնք պետք է ծառայեին հակաօդային պաշտպանության տեխնիկայի վրա, և Էստոնիայի կոմերիտմիության կողմից արժանացել է գովասանագրի): 1970 թվականից ֆիզիկա է դասավանդում: Աշխատել է նաև այլ բնագավառներում, սակայն երբեք չի կտրվել ֆիզիկայից՝ այն համարելով իր տարերքը:

Անչափ սիրելով ֆիզիկան ու կարևորելով նրա դերը երկրի տնտեսության, արդյունաբերության, հատկապես ռազմական արդյունաբերության գործում՝ իր գիտելիքներն է սիրով հաղորդում աշակերտներին: Նա այն եզակի ուսուցիչներից է, ով նախ և առաջ ապրում է աշակերտի հոգերով, իր առջև նստած աշակերտի մեջ տեսնում է երկրի ապագան կերտող քաղաքացուն և ջանք ու եռանդ չի խնայում, իր գիտելիքներն է հաղորդում յուրաքանչյուր աշակերտի: Նրա անձնական գրադարանը հարուստ է բազմաթիվ գիտական գրքերով ֆիզիկայից ու մաթեմատիկայից, գրել է մանկավարժական, մասնագիտական և այլ թեմաներով տասնյակ հոդվածներ: «Լուսարար» թերթում պարբերաբար հրատարակվում են «Ֆիզիկայի խնդիրների ընտրության և լուծման մեթոդիկան» խորագրով նրա հոդվածները՝ նպատակ ունենալով իր փոքրիկ ներդրումն ունենալ ֆիզիկայից աշակերտների հետաքրքրությունն ու ակտիվությունը մեծացնելու գործում: Սզնեքի միջնակարգ դպրոցում նրա ջանքերով ստեղծվել է ֆիզիկայի կաբինետ, որն ունի անհրաժեշտ սարքավորումներ ծրագրային փորձեր և լաբորատոր աշխատանքներ կատարելու համար (իհարկե, ոչ բոլոր, Բոյլ-Մարիոտի օրենքի ուսումնասիրման համար ուսուցիչը կիրառում է սովորական սրսկիչ մոնոմետր, և փորձն ավելի լավ է ստացվում, քան նկարագրված է դասագրքում): Այսպես, փորձարարական ֆիզիկայից ունեցած գիտելիքները և այդ ուղղությամբ հարուստ լրացուցիչ գրականությունը նրան ուղղորդում են դասաժամերը դարձնելու հետաքրքիր ու գրավիչ:

Շահեն Մարգարյանը 71 տարեկան է: 50 տարի է, ինչ ուսուցանում է ու ծառայում դպրոցին ու կրթությանը: Չնայած առողջական լուրջ խնդիրներին՝ այսօր էլ շարունակում է ֆիզիկա դասավանդել: Նա շատ ուրախ կլինի, եթե իր գործը շարունակող լինի, պատրաստ է օգնողի դերում իր փորձով ու գիտելիքներով աջակցել իր գործը շարունակողին:

Ինչպես իր գործին անմնացորդ նվիրված ցանկացած ուսուցիչ, այնպես էլ Շ. Մարգարյանն է հպարտանում և ուրախանում իր աշակերտների հաջողություններով ու ձեռքբերումներով՝ դրանք համարելով նաև իրենը: Նա ունեցել է շատ խելացի աշակերտներ, որոնք սիրում էին ֆիզիկան: Նրանք այսօր դարձել են նշանավոր մասնագետներ և ունենալով մեծ համբավ՝ աշխատում են Արցախում, ՀՀ-ում, ՌԴ-ում և այլուր: Նա սիրում է իր բոլոր աշակերտներին և այսօր էլ շարունակում է իր ավանդն ունենալ նրանց ձեռքբերումներում: Նրա, սխալված չեմ լինի, եթե ասեմ, ամենախելացի աշակերտը Արմեն Սահակյանն է, որին ուսուցիչն անվանում է կայացած փոքրիկ գիտնական, և սովորում է Սզնեքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանում: Նա սիրում է ֆիզիկան և արդեն ունի որոշակի հաջողություններ այդ բնագավառում: 2017թ. սովորելով 9-րդ դասարանում՝ Արմեն Սահակյանը մասնակցել է ֆիզիկայի դպրոցական առարկայական օլիմպիադային: Հաղթահարելով բոլոր փուլերը՝ նա մասնակցել է ՀՀ-ում կայացած եզրափակիչ փուլին և ՀՀ ԿԳ նախարարության կողմից արժանացել 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների «Բ» խմբի կազմում: 10-րդ և 11-րդ դասարաններում ևս մասնակցելով Ֆիզիկայի առարկայական օլիմպիադային՝ ՀՀ ԿԳ և ԱՀ ԿԳՍ նախարարությունների կողմից արժանացել է դիպլոմների ու գովասանագրերի: Արմեն Սահակյանը այն եզակի խելացի աշակերտներից է, ով 2019թ. ֆիզիկայից հանրապետական առարկայական օլիմպիադայում գրավելով 1-ին տեղ՝ արժանացել է Իոսիֆյանի անվան կրթաթոշակի: 2020թ. մասնակցելով Մոսկվայի ֆիզիկատեխնիկական գիտահետազոտական համալսարանի կողմից Ստեփանակերտում կազմակերպված ֆիզիկայի օլիմպիադային և 40 հնարավոր միավորից վերցնելով 37-ը՝ նա դարձել է հաջորդ փուլի մասնակից: Մասնակցել է նաև ֆիզիկայի առարկայական օլիմպիադային, հաղթահարելով շրջանային և մարզային փուլերը՝ անցել է եզրափակիչ փուլ: Արմենի ուսուցիչը նրանից ակնկալում է հաղթանակ և վստահ է, որ նա կհասնի մեծ նվաճումների ֆիզիկայի ասպարեզում և իր ներդրումը կունենա հայրենիքի զարգացման ու բարգավաճման գործում:

Անուշ ՍԱՀԱԿՅԱՆ
Սզնեքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

Իմ օրագրից

1990թ. ՓԵՏՐՎԱՐԸ

Արդեն քանիերորդ օրն է՝ վատառողջ եմ, նույնիսկ անկողնային ռեժիմում, բայց փետրվարի 15-ին Մյունխենում կազմակերպված Փաշինյան-Ալիև, ասել է թե՝ երկու հանրապետությունների գլուխների հանդիպման արարողությունը դիտելով անկողնուց դուրս եկա: Զայրացա, որ վարողը (անուն, ազգագունը չեմ հիշում) երկու գլուխներին էլ դրական գնահատական տվեց՝ ասելով, որ իբր նրանք պատմությունը լավ գիտեն, չնայած Իլհամ Ալիևը կոտրած պլաստինկայի նման դարձյալ նույն երգն է երգում՝ տարածքների ամբողջականություն, օկուպացված շրջաններից հայկական զորքերի դուրս բերում և այլն, և այլն: Ավելի զայրացա, երբ լսեցի, որ Ադրբեջանը 1923թ. Լեռնային Ղարաբաղին ինքնավար շրջանի կարգավիճակ է տվել: Ինքնավար շրջան. պատկերացնո՞ւմ եք, ԽՍՀՄ-ն իր պատմության մեջ այդպիսի վարչական միավոր չի ունեցել, ամենափոքր վարչական միավորը ազգային օկրուգն էր, իսկ սա ինքնավար շրջանի մասին է բարբաջում: Սպասում էի հակահարվածի, բայց... Բանն այն է, որ 1921թ. կուսակցության Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը կցվել էր Ադրբեջանին ինքնավար մարզի լայն կարգավիճակ տալու պայմանով, իսկ ադրբեջանական իշխանություններն ամեն ինչ արել են, որ այդ ինքնավարությունը չտան, բայց, հանդիպելով ԼՂ բնակչության դիմադրությանը, երկու տարի ձգձգումից հետո ստիպված են եղել 1923թ. հուլիսի 7-ին այդ ինքնավարությունը տալ և հետին ու կեղտոտ նպատակներ հետապնդելով՝ 1924թ. ընդունել են մի փաստաթուղթ, որին տվել են «Սահմանադրություն Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանի» անունը: Ահա թե որտեղից է կրտսեր Ալիևը «խորությամբ» իմանում պատմությունը և այսօր առանց ամաչելու 70 տարվա Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը ինքնավար շրջան անվանեց ու հակահարված չստացավ: Եվ այդպես զայրացած բացում եմ օրագիրս՝ 1990թ. օրագիրս:

1-5.02.1990թ.: Անչափ լարված վիճակում ենք, գործադուլ, դասադուլ, Սաֆոնովյան դաժան ռեժիմ: Մայր Հայաստանում գործում է արտակարգ իրադրությունների հանրապետական խորհրդի օպերատիվ շտաբ, որի հաղորդմամբ փետրվարի 4-ի լույս 5-ի գիշերը Լաչինի շրջանի կողմից կրակ է բացվել խորհրդային բանակի և ներքին գործերի զորքերի վրա, որը լռեցվել է պատասխան կրակոցներով: Վիրավորվել է մի գյուղացի: Երևանից Ստեփանակերտ թռիչքներ են գործել միայն ՅԱԿ-40 ինքնաթիռներ: Գետաշենի ուղղությամբ զինվորական ուղղաթիռով մի թռիչք է եղել, որով բժիշկներն են հասել և վիրավորներ տեղափոխել Երևան:

6.02.1990թ.: «Время»-ն հաղորդեց, որ սկսվել է կուսակցության Կենտկոմի պլենումը, որը քննարկեց Կուսակցության 28-րդ համագումարի առթիվ ԽՄԿԿ ԿԿ-ի ծրագրի նախագծի մասին հարցը: Զեկուցումով հանդես է եկել Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովը: Այսօր փետրվարի 5-ի շրջափակմանը ավելացավ նաև ռադիո-հեռուստահաղորդումների արգելումը. Ադրբեջանի կողմից գրավվեց մարզային ռադիոխմբագրությունը, և սկսվեց հակաղարաբաղյան, հակահայկական լուրերի հաղորդման տարափը:

8.02.1990թ.: Թերթում տպագրված է Մ.Գորբաչովի զեկուցումը ԽՄԿԿ ԿԿ-ի փետրվարի 5-ի պլենումում: «Խորհրդային Ղարաբաղում» տպագրված է նաև «Ալիևշչինա կամ քաղցր ժամանակի ողբ» վերտառությամբ բժշկական գիտությունների դոկտոր Վ.Էֆենդիևի հոդվածը, որում ընթերցում եմ. «Բրեժնևը սիրում էր քծնողներին, որոնց թվում՝ Ալևին, որին հավասարը չկար»: Ադրբեջանում տիրող իրադարձությունների շուրջ Հ.Ալիևն ասում է. «Եթե ես լինեի այնտեղ, այդպիսի բան չէր պատահի, եթե իմ ձեռքում լիներ ամբողջ իշխանությունը, ապա Ադրբեջանը այդպիսի ողբերգության մեջ չէր լինի»: Ընթերցելով այս տողերը՝ պատմությունից վերհիշեցի Նարիման Նարիմանովին, որը գտնվելով Մոսկվայում, լսելով Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու որոշումը, գրում է, որ եթե ինքը Բաքվում լիներ, ապա այդ ինքնավարությունը չէր տրվի, «ոչ թե նրա համար, որ ես չեմ ցանկանում, այլ որ հայերը չեն ցանկանում, իսկ Լևոն Միրզոյանը, օգտվելով, որ ես այնտեղ չեմ, ճնշում է գործել Ադրբեջանի կառավարության վրա, և այդ որոշումը 1923թ. հուլիսի 7-ին ընդունվել է»:

9.02.1990թ.: «Մտորումներ մեր վերակառուցման շուրջը» վերտառությամբ հոդվածից, որի հեղինակը Կիրովականի ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու Երվանդ Բաղդասարյանն է, ինձ հետաքրքրեց նրա կարծիքը «Խորհրդային ֆեդերացիայի մասին» կետը, այն է՝ «Ինչո՞ւ կապիտալիզմի պայմաններում մի պետության տարածքի ներսում կարող են լինել ՄԱԿ-ի անդամ հանդիսացող առանձին պետություններ, իսկ մեզ մոտ՝ սոցիալիստական երկրում խանգարում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրականացումը: Օրինակ է բերում Իտալիան, որի ներսում Սան-Մարինո և Վատիկան պետություններն են:

11.02.1990թ.: Ճանոթանում եմ Արտակարգ դրության շրջանի պարետի հաղորդագրությանը: Փետրվարի առաջին տասնօրյակում Խոջալու, Դաշբուլաղ և այլ վայրերում անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակ 80 մարդ է հայտնաբերվել, որոնք տեղական գրանցում չունեն: Զարմանում եմ. 1989թ. նոյեմբերի 28-ի ԽՍՀՄ ԳԽ որոշման մեջ մի կետում պահանջվում է պարտադիր կերպով պահպանել դեմոգրաֆիական առկա վիճակը, իսկ սաֆոնովականները, անտեսելով այդ, Արցախի շատ գյուղերում արագ տեմպերով վերաբնակեցնում են Հայաստանից եկած ադրբեջանցիներին և մեսխեթցի թուրքերին, բայց նշում է, որ 80 հոգի տեղական գրանցում չունեն: Փետրվարի 6-9-ը Ստեփանակերտի երկաթուղային կայարան է ժամանել 66 վագոն, իսկ Ստեփանակերտից ուղարկվել է 90 վագոն: Այդ օրերի ընթացքում 48 ավտոբուսներով 40 բնակավայրեր են տեղափոխվել 1300 ուղևորներ: Փետրվարի 5-ի երեկոյան ժամը 21-ին անհայտ անձանց կողմից գնդակոծության է ենթարկվել Ասկերանի նավթաբազայի պահակակետը, վիրավորվել է Վ. Բալովևը:

13.02.1990թ.: Հայկական ԽՍՀ գերագույն խորհուրդը ընդունեց «1990թ. հունվարին Բաքու քաղաքում և Ադր.ԽՍՀ մի շարք այլ բնակավայրերում կատարած սպանությունների, ջարդերի և այլ ոճրագործությունների ու դրա հետևանքով ռեգիոնում իրավիճակի առավել սրման մասին», «Հայկական ԽՍՀ շրջափակման մասին» և ՌԿ(բ)Կ ԿԿ կուսակցության Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչելու մասին» որոշումները:

17.02.1990թ.: Մ.Ս.Գորբաչովի ելույթը ԽՍՀՄ ԳԽ երրորդ նստաշրջանի բացմանը: Նա իր ամբողջ մաղձը թափում է Ղարաբաղի և Հայաստանի վրա՝ ասելով, որ Ղարաբաղը չի ենթարկվում միութենական և Ադրբեջանի որոշումներին, որ ղարաբաղցիների մեղքով են տեղի ունեցել Անդրկովկասի անկայունությունը, սահմանների քանդումը, Բաքվի դեպքերը և շղթայական ռեակցիայով անցել են Դուշանբե ու երկրի այլ տարածաշրջաններ:

19.02.1990թ.: ԽՍՀՄ Ազգությունների սովետի նախագահ Նիշանովը կարևոր նշանակություն չի տալիս ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ գործադրված բռնություններին, Արաքսի երկարությամբ սահմանային կառույցների քանդմանը և դեպի Իրան անցուղիների բացմանը, այլ մղկտում է Բաքվի՝ հունվարի 19-20-ին ադրբեջանցիների կոտորածների համար և բոլոր հանցանքների մեջ մեղադրում է Ղարաբաղին ու նրա պաշտպան Հայաստանին: 1990թ. փետրվարի 19-ին կայանում է երկու պալատների դռնփակ նիստ: Այդ փակ նիստում լսվում է Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից հնչեցված տեղեկատվությունը: Ելույթ են ունենում Պրիմակովը, Յազովը, Բակատինը և ուրիշներ (օրագրիս կցված են նրանց ելույթների տեքստերը): ԽՍՀՄ ՀՈՒ նախարար Դ. Յազովը համոզիչ փաստերով հաստատում է, որ Ադրբեջանում համատեղ են գործում հանրապետական ղեկավարները, ազգային ճակատայինները ու բոլոր կարգի ծայրահեղականները, ընդ որում, հնարովի փաստարկներով մեղադրում են հայերին և Խորհրդային Միությանը: Պրիմակովը խոստովանում է, որ 1990թ. հունվարի 13-18-ը Բաքվում և շրջաններում տեղի են ունեցել հայկական ջարդեր և հայերի բռնագաղթ: «...Բանակային զորամասերի առջև խնդիր էր դրվել վերատեղաբաշխվել ու իրենց ներկայությամբ ապահովել բնակչության անվտանգությունը: Սակայն ճանապարհները շրջափակված էին, երկաթուղում շրջափակված էր նաև ՆԳՄ այն հատուկ զորքերի տեխնիկան, որոնք արդեն իսկ Բաքվում էին: Առանց այդ տեխնիկայի, ինչպես նաև այդ զորքերին ավտոբուսներ, միկրոավտոբուսներ տրամադրելու մասին խնդրանքների գործնական նենգադուլի պայմաններում ՆԳՄ զորամասերը զրկված էին շարժունակությունից: Այս ամենը կատարվում էր մի քաղաքում, որտեղ բառացիորեն նախօրեին տեղի էին ունեցել սարսափելի ջարդեր և որտեղ տակավին հայտնաբերվում էին ճանաչված և չճանաչված դիակներ»,- նշում է Ե.Պրիմակովը:

«Գուցե այսուհետև չենթարկվենք նրանց նենգասպառնալիքներին, ովքեր վախեցնում են ԽՍՀՄ-ից դուրս գալով, այլ ինքներս Խորհրդային Միությունից վտարենք ցանկացած հանրապետության, որը կմխրճվի քաոսի մեջ, դրա հետ մեկտեղ այն ուղեկցելով Կենտրոնի հասցեին կշտամբանքներով, իսկ երբեմն էլ սպառնալիքներով: Այսքանը հասկացնում է բոլորին, բայց, ցավոք սրտի, ճիշտ եզրակացության չի գալիս և շարունակում է. «...Լեռնային Ղարաբաղում թե Հայաստանում պետք է հասկանան, որ չկա հարցի լուծման ճանապարհ Ադրբեջանի ինքնիշխանությունից այդ տարածքը բռնի ուժով խլելու միջոցով: Բավ է խաղալ մարդկանց ճակատագրերի հետ»: Ուղղակի զարմանում եմ, որ նման անհատները մինչև հիմա չեն հասկացել կամ չեն ուզում հասկանալ իրականը, ճշմարտությունը, որ ոչ Ղարաբաղը և ոչ էլ Հայաստանը բռնի ուժով տարածքներ խլելու ոչ նպատակ և ոչ էլ խնդիր ունեն, այլ ուզում են իրենց պապենական տարածքների վրա, իրենց հայկական բնօրրանում ապրել: ՆԳՄ նախարար Վ.Վ. Բակատինը բարբարոսական հանցագործություն է համարում Գանձակի քարահանքում տանջամահ արված, բնակարաններում, փողոցներում, ծառայողական շենքերում խոշտանգված, սպանված և ավելի քան 20 հազար հայերի արտաբնակեցումը: «...Գանձակ քաղաքի քարահանքում հայտնաբերվել են 12 հայ հաշմանդամների դիակներ: Այս սպանությունն արդեն բացահայտված է, և մարդասպանները ձերբակալված են: Ծառայողական շենքերում իրենց փրկությունն են գտել շուրջ 2 հազար հայեր, արտաբնակեցվել են ավելի քան 20 հազար հայեր...»,- նշում է Բակատինը: Իսկ Մ.Ս. Գորբաչովը, ընդունելով նրան, ասում է. «Ադրբեջանում բոլորը՝ վերևից մինչև ներքև, ահաբեկված են և ամեն ինչ անում են սպառնալիքի տակ, այդ թվում դուք տեսաք, որ կուստոմսեր էին այրում: Պարզվում է, որ ասել են՝ եթե դուք առաջինը չայրեք (ասողները ազգային ճակատայիններ են - *Մ.Շ.*), ապա մենք ձեզ հետ դատաստան կտեսնենք: Գնում են այրում ԽՍՀՄ կազմից Նախիջևանի դուրս գալու մասին փաստաթուղթը: Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության կին նախագահը ստորագրել է ատրճանակի փողի տակ...

20.02.1990թ.: Պատմական որոշման օրվա տարեդարձն է, բայց տանը նստած թերթ եմ ընթերցում: Շարունակվում է հունվարի 29-ից սկսված գործադուլը: Չեն աշխատում դպրոցական և նախադպրոցական հիմնարկները: Դադարեցված են հայերեն և ռուսերեն լեզվով մարզային ռադիոհաղորդումները, եթեր չի դուրս գալիս հեռուստատեսությունը, կենտրոնական ոչ մի թերթ կամ ամսագիր չենք ստանում: Պարետային ժամը 22.00-ից մինչև առավոտյան 6-ն է սահմանվել:

23.02.1990թ.: «Խորհրդային Ղարաբաղում» տպագրված է «Երկրի աշխատավորությանը ԽՄԿԿ Կենտկոմի դիմումը, որը մեզ համար հետաքրքիր չէ:

24-26.02.1990թ.: Գործադուլը շարունակվում է:

27.02.1990թ.: «Խորհրդային Ղարաբաղում» տպագրված է օպերատիվ բաժնի հաղորդագրությունը, որ մարզում սկսվեց մասսայական գործադուլի հինգերորդ շաբաթը: Փակ են միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները, հանրակրթական դպրոցները, մսուր-մանկապարտեզները, պետական շատ հիմնարկներ: Չեն հեռարձակվում մարզային ռադիոյի և հեռուստատեսության հաղորդումները, իսկ Հայաստանից հեռուստատեսության 1-ին ծրագիրը անորակ է հաղորդվում: Մարզի 4 շրջաններում նույնպես խախտված է աշխատանքային ռիթմը: Շինարարական աշխատանքներ են տարվում միայն Ասկերանում, որտեղ Ստեփանակերտի առանձին շինկազմակերպություններ աշխատում են հավաքովի տների շինարարության վրա: Ստեփանակերտ քաղաքում կալանվել է 51 մարդ:



ОБРАЩЕНИЕ

военного коменданта района чрезвычайного положения к населению НКАО

Дорогие соотечественники, братья и сестры!

Вот уже два года нет покоя на этой мирной, доброй земле. У порога огромного несчастья и невиданных потерь оказались два древних народа. Возникшую проблему никто за проживающих в области армян и азербайджанцев решать не будет.

Вам, именно вам, сыновьям этой земли, необходимо приложить максимум усилий к нормализации обстановки.

Как вам известно, Президиум Верховного Совета Азербайджанской ССР в соответствии с постановлением Верховного Совета СССР от 28 ноября 1989 года «О мерах по нормализации обстановки в НКАО» создал республиканский оргкомитет. В связи с этим жителям НКАО необходимо внести предложения о паритетной части. Было бы желательно, чтобы эти предложения вносили местные партийные, советские органы, общественные организации, сельские сходы, собрания по месту жительства, а также отдельные граждане. Вы можете предложить любую кандидатуру.

Оргкомитет — это гарантия безопасности всех граждан области.

Оргкомитет — это ритмичная работа предприятий, учреждений, колхозов, совхозов, строек, создание дополнительных рабочих мест.

Оргкомитет — это быстрейшее решение проблем беженцев.

Оргкомитет — это создание условий для формирования местных партийных и советских органов.

Призываю вас способствовать формированию и быстрейшему началу работы оргкомитета.

Мир каждому дому, каждой семье.

Военный комендант района чрезвычайного положения, генерал-майор САФОНОВ В. Н.

Մալիբեկլի գյուղում փետրվարի 24-ին անց է կացվել անձնագրային ստուգում, որի ընթացքում հայտնաբերվել են 17 անձինք, որոնցից տեղական գրանցում չունեն 7 հոգի, ԼՂԻՄ-ում առանց գրանցման են 8 հոգի, փչացած անձնագրով՝ 5 հոգի:

Համոզված եմ, որ այսօր Սաֆոնով-կազմկոմիտե միացյալ ուժերն օգտագործում են արտակարգ դրության ստեղծած իրավիճակը և զինվորական կազմակերպված ուժերով դիմում են բոլոր ծայրաստիճան ստորացուցիչ միջոցների՝ Լեռնային Ղարաբաղը օրինականացնելու ադրբեջանական տիրապետությանը: Ամեն օր սաֆոնովյան թռուցիկներ են տարածվում և մեր ներվերը քայքայում: Դրանցից մեկը ներկայացնում եմ, որում գրված է. «Призываю вас способствовать формированию и быстрейшему началу работы оргкомитета»: Պարզ է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը չի ընդունում կազմկոմիտեին, բայց նա ճակատը պնդեցրած՝ իր դիրքերն է ամրապնդում:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԹԿ

ՈՒՂԵՑՈՒՅՑ
4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

1. ՄԱՅՐԵՆԻ

I. Թեստի կառուցվածքը

Թեստը պարունակում է 15 առաջադրանք և բաղկացած է 2 մասից:

1-ին մասը պարունակում է որևէ տեքստ՝ գեղարվեստական կամ գիտահանրամատչելի և 7 առաջադրանք տեքստի բովանդակության վերաբերյալ: Առաջադրանքներից մեկը ընտրովի է, իսկ մնացածին պետք է պատասխանել բառով կամ նախադասությամբ: Այդ առաջադրանքներով ստուգվում են ընթերցանության զանազան ունակություններ՝ ուշադրություն, հետևություններ ու եզրակացություններ անելու կարողություն, տեքստը վերլուծելու, գնահատելու և արժևորելու հմտություններ: Տեքստերի ծավալները կախված են դրանց տեսակից. գեղարվեստական բովանդակությամբ տեքստերը պարունակում են շուրջ 350 բառ, գիտահանրամատչելիները՝ շուրջ 250 բառ:

2-րդ մասը պարունակում է 8 առաջադրանք (8-15-րդը), որոնցով ստուգվում են.

1. բառի կազմության ճանաչում՝ պարզ, բարդ (հոդակապով, անհոդակապ), ածանցավոր (նախածանցավոր, վերջածանցավոր),
2. բառի իմաստի իմացություն, հոմանիշների և հականիշների ճանաչում, բառի փոխաբերական իմաստով գործածություն, դարձվածքների ճանաչում,
3. ուղղագրական դժվարություն ունեցող բառում բաց թողած տառի տեղադրում,
4. գոյականի, դրա թվի և տեսակների՝ հատուկ, հասարակ, ածականի, թվականի, շաղկապի ճանաչում,
5. նախադասության անդամների ճանաչում՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, լրացումներին տրվող հարցերի իմացություն:

II. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորն է 15-ը: Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից սովորողի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է 10 բալանոց համակարգին:

Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
0-1	1	8-9	6
2	2	10-11	7
3	3	12-13	8
4-5	4	14	9
6-7	5	15	10

III. Աշխատանքի համար հատկացվող ժամանակ

Աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

ԹԵՍՏ

(նմուշ)

1-7-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

Բարուրի մեջ ամուր փաթաթված մանկիկը թեև կուշտ էր, բայց ոչ մի կերպ չէր հանդարտվում: Մի ձայնի ճչում էր, անհանգիստ շարժումներ անում: Մոր փաղաքուշ հորդորները, խոսքերը, օրորոցայինը չէին օգնում: Ծնողները չէին հասկանում փոքրիկի աղիողորմ լացի պատճառը: Գուցե բարո՞ւրը բացեն: Արձակեցին կապանքները, և նույն րոպեին երեխան լռեց ու խաղաղ փակեց աչքերը: Մայրը հասկացավ. նրան կաշկանդել չէր կարելի:

Այդ ըմբոստ մանկիկը Լյուդվիգ վան Բեթհովենն էր՝ ապագա հանճարեղ կոմպոզիտորը: Անուրախ մանկություն է ունեցել մանչուկը: Հայրը սիրում էր ոգելից խմիչքներ: Նա երազում էր որդուն դարձնել մի նոր Մոցարտ: Յոթ տարեկան Լյուդվիգը, որ երբեմն ուզում էր վազվզել բակում, պահմտոցի, գնդակ խաղալ, հոր պահանջով գամված էր դաշնամուրին: Հայրը տեսնում էր տղայի բացառիկ ընդունակությունները և արգելում բացի երաժշտությունից որևէ այլ բանով զբաղվել:

Տասնմեկ տարեկան հասակում Բեթհովենն արդեն աշխատում էր եկեղեցում որպես երգեհոնահար, իսկ տասնչորս տարեկանում մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:

Շուտով Բեթհովենն այնքան է հռչակվում, որ շատ ազնվական տներից հրավերներ է ստանում՝ դառնալու սալոնային երաժիշտ: Բայց ըմբոստ ոգով ու անկախ բնավորությամբ Բեթհովենը հրաժարվում է՝ նախընտրելով մնալ աղքատ, բայց չապրել որևէ մեկի հրամանի ներքո, չկատարել պատվերներ:

Քսանյոթ տարեկանում Բեթհովենին մեծ դժբախտություն է պատահում. նա սկսում է խլանալ: Սակայն մեծ կոմպոզիտորն օժտված էր բացառիկ կամքով... «Ես կբռնեմ ճակատագրի կոկորդից, և նա չի կարող ինձ լիովին տապալել, - գրում էր բարեկամներին, - հաղթանակ՝ պայքարի միջոցով»:

...Խլությունը խորանում է: Բեթհովենի համար գնալով դժվարանում է մարդկանց հետ շփվելը, և միայն բնության գրկում է նրա հոգին լցվում երաժշտությամբ, ինչպես մանկության օրերին էր:

1-4 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը

1. Ի՞նչ են մտածում անել ծնողները բարուրի մեջ փաթաթված մանկիկին հանդարտեցնելու համար:

Պատասխան՝ _____
_____:

2. Ո՞վ էր այդ ըմբոստ մանկիկը:

Պատասխան՝ _____
_____:

3. Ինչպիսի՞ մանկություն է ունեցել նա:

Պատասխան՝ _____
_____:

4. Ի՞նչ էր երազում Բեթհովենի հայրը:

Պատասխան՝ _____
_____:

5. Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ.

Տասնմեկ տարեկանում որտե՞ղ էր աշխատում պատանի երաժիշտը:

1) Մասնավոր դասեր էր տալիս ազնվական ընտանիքների երեխաներին:
2) Նա չէր աշխատում, տանը գամված էր միայն դաշնամուրին:
3) Ազնվական տներում աշխատում էր որպես սալոնային երաժիշտ:
4) Եկեղեցում աշխատում էր որպես երգեհոնահար:

6-րդ, 7 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը

6. Քսանյոթ տարեկանում ի՞նչ դժբախտություն է պատահում Բեթհովենին:

Պատասխան՝ _____
_____:

7. Մեծ դժբախտությունից հետո ինչպե՞ս էր Բեթհովենը լցվում երաժշտությամբ:

Պատասխան՝ _____:

8-րդ, 9-րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը

8.

բառ	*արմատ*	*ածանց*
ընդառաջ		
թագավոր		
դյութիչ		

9. Խմբավորել բառերը.

ձոր, անդնդախոր, թույլ, շառաչյուն, փոքրիկ, սարալանջ, գետակ, ձյուն, լայնատերև

պարզ	*բարդ*	*ածանցավոր*

10. Համապատասխանեցնել.

Բառեր	**Հականիշներ**
1) անկեղծ	ա) գորշ
2) մաքուր	բ) որոտ
3) աղմուկ	գ) անդորր
	դ) ազնիվ
	ե) աղտոտ
	զ) խարդախ

Պատասխան՝ 1-____, 2-____, 3 -____

11-13-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանը կարող է ունենալ մեկ կամ մի քանի տարբերակ

11. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով

1) դալար կանաչ
2) լայնարձակ հովիտ
3) երփներանգ ծաղիկներ
4) անուշահոտ ջերմություն

12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ

1) ականջները սրել, 2) ուրիշին խաբել, 3) լեզուն կծել, 4) ճաշը համտեսել, 5) սիրտ անել, 6) աչքերը հառել, 7) գլուխ պահել

13. Ո՞ր բառերում է գրվում *-դ-:*

1) ծնուն..., 2) բր...ոտ, 3) դա...ար, 4) փար...ամ, 5) սրընն...աց, 6) զար…

14. Գրել պատասխանը

Ո՞րն է տրված նախադասության ենթական:

Ձյունը ծվարել էր ուղղաձիգ լեռնագագաթների ծերպերին:

Պատասխան՝_____:

15. Լրացնել աղյուսակը.

Տրված նախադասությունից դուրս գրել աղյուսակում նշված խոսքի մասերը և գրել դրանց տրվող հարցերը:

Արևն քայլում էր ցողապատ խոտերի միջով, բազմերանգ ծաղիկներ հավաքում և կազմում մի մեծ ծաղկեփունջ:

գոյական (հարցը)	ածական (հարցը)	բայ (հարցը)

2. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 18 առաջադրանքներից:

1-11-րդ առաջադրանքները ընտրովի են, 12-16-րդ առաջադրանքները՝ կարճ պատասխանով:

1-16-րդ յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 17-րդ և 18-րդ առաջադրանքները, որոնք խնդիրներ են: Այդ խնդիրները լուծելիս աշակերտը պետք է ներկայացնի խնդրի լուծման ամբողջ ընթացքը: 17-րդ խնդիրը լուծելիս՝ գծագիրը, 18-րդ-ը լուծելիս համառոտագրությունը պարտադիր են: Այդ խնդիրներից յուրաքանչյուրին տրվում է 2-ական միավոր: Թեստի առավելագույն միավորն է՝ 20:

Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքների պատասխանների՝ սովորողի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է 10 բալանոց համակարգին:

ԳԹԿ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

Միավորը	Գնահատականը	Միավորը	Գնահատականը
1	1	11-13	6
2-3	2	14-15	7
4-5	3	16-17	8
6-7	4	18-19	9
8-10	5	20	10

Աշխատանքի կատարման համար հատկացվում է 60 րոպե:

ԹԵՍՏ

(նմուշ)

1-11-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

1 **Չորս հազար երեք հարյուր յոթ թվին համապատասխանող թիվն է՝**

1) 4037
2) 4307
3) 4703
4) 4073

2 **360-ից 12-ով փոքր թիվն է՝**

1) 480
2) 372
3) 348
4) 240

3 **768 թվի տասնյակների քանակն է՝**

1) 6
2) 76
3) 7
4) 68

4 **Աստղանիշի փոխարեն ո՞ր թվանշանի տեղադրման դեպքում ստացված թվերը դասավորված կլինեն նվազման կարգով. 8*6, 856, *75**

1) 4
2) 5
3) 7
4) 9

5 **4 կգ 61 գ < 4 կգ * 1գ անհավասարության մեջ աստղանիշի թվանշանն է՝**

1) 4
2) 5
3) 6
4) 7

6 **2 օր 15 ժամը ժամերով հավասար է՝**

1) 215 ժ
2) 39 ժ
3) 63 ժ
4) 135 ժ

7 **Քառակուսու պարագիծը 132 սմ է: Քառակուսու կողմի երկարությունն է՝**

1) 33 սմ
2) 66 սմ
3) 43 սմ
4) 22 սմ

8 **Նշի՛ր այն գծապատկերը, որի $\frac{3}{7}$ մասը ներկված է:**



9 **Ճիշտ պնդում է՝**

1) նվազելին կստանաս, եթե հանելիից հանես տարբերությունը
2) գումարելիներից մեկը մեծացնելիս, իսկ մյուսը փոքրացնելիս միևնույն միավորով, գումարը չի փոխվում
3) 0-ից տարբեր երկու հավասար թվերի քանորդը հավասար է 0-ի
4) թիվը 10-ով բազմապատկելիս բավական է այդ թվի գրության վերջից երկու 0 ավելացնել

10 **Կտրեցին 12 մ երկարությամբ մետաղալարի $\frac{1}{4}$ մասը: Քանի՞ մետր մետաղալար մնաց:**

1) 3 մ
2) 6 մ
3) 9 մ
4) 48մ

11 **25 – 5 • 4 : 2 + 50 • 2 արտահայտության արժեքն է՝**

1) 180
2) 130
3) 115
4) 140

12-16 -րդ առաջադրանքներում գրել պատասխանը

12 **Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե AD = 155 մմ, AB = 23 մմ, BC = 82 մմ:**

Պատասխան՝ _____

13 **Հաշվիր ամենամեծ զույգ քառանիշ և ամենափոքր կենտ եռանիշ թվերի տարբերությունը:**

Պատասխան՝ _____

14 **Դի՛ր թվաբանական գործողության նշանները (+, -, • , :) այնպես, որ վերականգնվի հավասարությունը:**

94 □ 54 □ 6 = 85

15 **Հաշվի՛ր 6532 - 5 • (1253 : 7 + 536) արտահայտության արժեքը**

Պատասխան՝ _____

16 **Կռահի՛ր օրինաչափությունը և տրված թվերից հետո ավելացրո՛ւ ևս մեկ թիվ:**

324, 524, 924, 1524, …. :

Պատասխան՝ _____

17-18-րդ առաջադրանքները կատարելու համար պետք է մանրամասն և հիմնավորած ներկայացնել առաջադրանքների կատարման ողջ ընթացքը:

17 Ուղղանկյունաձև սավանի երկարությունը 220 սմ է, որը 60 սմ-ով մեծ է լայնությունից: Հաշվի՛ր այդ սավանի մակերեսը:

Պատասխան՝ _____

18 Երկու վայրերից, որոնց միջև եղած հեռավորությունը 564 կմ է, միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենա, նրանցից մեկի արագությունը 63 կմ/ժ էր: Ի՞նչ արագությամբ էր շարժվում երկրորդ ավտոմեքենան, եթե ավտոմեքենաները հանդիպեցին շարժվելուց 4 ժամ հետո:

Պատասխան՝ _____

ՀԶՈՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 5-ին աշխատանքային այցով դպրոց էին այցելել ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Ն. Աղաբալյանը, կրթության տեսչության պետ Մ. Մխիթարյանը, Մարտակերտի շրջանի ԿՍ բաժնի վարիչ Դ. Լալայանը: Տեղում ծանոթացան դպրոցի խնդիրներին, զրույց անցկացրին աշակերտների հետ և խոստացան տարբեր ծրագրեր իրականացնելիս մասնակից դարձնել նաև մեր դպրոցի աշակերտներին:

Խոստումը չուշացավ:

Փետրվարի 8-ին դպրոց այցելեցին «Երևանի երիտասարդ մտքեր» խմբի ներկայացուցիչներ Վահագն Մուրադյանը (ֆիզիկոս), Սուսաննա Գևորգյանը (կենսաքիմիկոս), Քրիստինա Սահակյանը և Հայկ Հովակիմյանը (ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի երկրաբաններ), Լուսինե Կարապետյանը («Ամերիկյան մանրէաբանական ընկերություն» ուսանողական խմբակ, կենսաքիմիկոս) և «Արցախի երիտասարդ մտքեր» խմբի ֆիզիկոս Աննա Գրիգորյանը, Արցախի ԿԳՍ նախարարի օգնական Ապրես Պետրոսյանը: Նրանք ներկայացրին և պարզաբանեցին բնագիտության մի շարք հետաքրքրաշարժ փորձեր: Նշեցին, որ արդեն երրորդ անգամն է, ինչ այցելում են Արցախի տարբեր շրջանների դպրոցներ: Փորձերին ներգրավեցին նաև աշակերտներին, ինչի արդյունքում ստեղծվեց

ջերմ մթնոլորտ: Աշակերտները մեծ բավականություն ստացան: Նմանատիպ միջոցառումները նպաստում են աշակերտների մոտ բնական գիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանին՝ կազմակերպելու և խմբի բոլոր անդամներին՝ բարձր մակարդակով անցկացնելու համար:

«Նոր Մարաղայի Վագիֆ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՐԱԽՏԱՆՔՈՎ

Ասում են՝ հուշը պատմության աներկբա վկան է, անցյալի և ներկայի հիշողության կամուրջը:

Այսօր տարիների հեռվից հուշեր ունեմ հայ ժողովրդի բարեկամների շարքում իր ուրույն տեղն ունեցող արժանի ու պատվավոր ռուս գիտնական, քաղաքական գործիչ ու իրավապաշտպան, Շուշիի Խաչատրյան գերդաստանի անդամների հետ մտերմացած Գալինա Ստարովոյտովայի մասին: Առաջադեմ գաղափարներով օժտված հմայիչ ռուս կինն անմնացորդ նվիրվեց Հայաստանին և Արցախին՝ սկսած 1988-ի փոթորկահույզ փետրվարից, երկրաշարժից, պատերազմից մինչև իր չարաբաստիկ մահը՝ 1998-ի նոյեմբերի 20-ը:

Ահա այդ օրերից մնացել են գեղեցիկ հուշեր, որոնք սրտառուչ ու ջերմ հետք են թողել մեր գերդաստանում:

1984թ. ամառն էր: Շուշի էին եկել անվանի հուշեցի հայագետ-բյուզանդագետ, միջնադարյան հայոց պատմագրության երկերի թարգմանիչ, պատմական գիտությունների դոկտոր Կարեն Մկրտիչի Յուզբաշյանը և քաղաքական գործիչ, գիտնական ու իրավապաշտպան Գալինա Ստարովոյտովան՝ ամուսնու և որդու հետ: Արշավախումբը տեղավորվել էր Շուշիի նորակառույց ինը հարկանի, բոլոր հարմարություններով առլեցուն հյուրանոցում՝ սպասարկման բարձր մակարդակով: Նրանց է այցելում մեր գերդաստանի նահապետ, թիվ 2 գիշերօթիկ դպրոցի տնօրեն, վաստակաշատ մանկավարժ Արսեն Խաչատրյանը: Երկար, մտերմիկ զրույցից հետո Յուզբաշյանը խնդրում է, որ հնարավորության սահմաններում իրենց տեղափոխի ռեալական ուսումնարանի շենքը: Խաչատրյանը համաձայնվում է, ստեղծում հնարավոր պայմանները՝ ընդարձակ դասասենյակները դարձնելով հյուրասենյակ: Նրանք իրենց շատ լավ էին զգում և ամենօրյա հանդիպումների ժամանակ ազգագրական խորաթափանց զրույցներով բացահայտում էին Շուշիում ապրող հայերի վիճակը, միաժամանակ ուսումնասիրում բերդաքաղաքի և Բերդաձորի ենթաշրջանի բնակչության երկարակեցության հարցը: Իրականում մենք 4 տարի հետո զգացինք, որ նրանց այցը կապված էր 1988-ի փետրվարյան փոթորկահույզ դեպքերի, ազգային-ազատագրական պայքարի, Արցախի ապագայի հետ:

Մեր օջախում հանդիպում էինք համարյա ամեն օր, իսկ վերջին երեկոյան արշավախմբի անդամներին ջերմ ընդունելուց հետո ճանապարհեցինք՝ նորից հանդիպելու ակնկալիքով: Այնուհետև կտրվեց մեր անմիջական կապը նրանց հետ:

1988-ի սեպտեմբերի 19-ին վերջնականապես բարբարոսաբար տեղահանվեց Շուշիի հայությունը թուրք ոճրագործների պլանով: Այդ թվում՝ նաև մեր ընտանիքը: Ժամանակավորապես ապրեցինք Ստեփանակերտում, աշխատեցինք՝ անհամբեր սպասելով հայրենի քաղաքի ազատագրման բաղձալի օրվան, որն իրականացավ 1992-ի մայիսի 9-ին:

Կարեն Յուզբաշյանն ու Գալինա Ստարովոյտովան մեր կողքին էին ծանր ու ուրախ օրերին՝ ոգևորելով իրենց պատգամավորական գործունեությամբ, բոցաշունչ ելույթներով:

Հիշենք, որ Կարեն Յուզբաշյանը 1988-1990 թվականներին Լենինգրադի «Հայ մշակույթի բարեկամներ» ընկերության նախագահն էր, 1990-1995-ին՝ ՀՀ ԳԽ պատգամավոր:

Գալինա Ստարովոյտովան կրակոտ ելույթներով 1988-1989թթ. հանդես էր գալիս Երևանի բազմահազարանոց հանրահավաքներում, իսկ 1989թ. նա բացարձակ առավելությամբ ՀԽՍՀ-ից ընտրվեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր՝ պատվով կատարելով 1989-1991թթ. ժողովրդի ընտրյալի իր պարտականությունները: Հայկական շահերի մասին նա չէր մոռանում, երբ ՌԽՖՍՀ ժողպատգամավոր էր 1990-1993թթ. և ՌԴ պետդումայի պատգամավոր՝ 1993-1998թթ.:

Իմ հիշողության ծալքերում դեռ թարմ են մեր բարեկամների վերոհիշյալ դրվագները և դեռ ավելին:

Անցան տարիներ: 1992թ. մայիսի 9-ին ազատագրվեց հայոց բերդաքաղաք Շուշին մեր քաջազուն, արիասիրտ նվիրյալների կողմից: Շուշին թոթափեց 70-ամյա թուրքական բռնակալության լուծը, դարձավ հայաշունչ, իր գիրկն առավ փրկված զավակներին:

Մենք ցնծությամբ ընդունեցինք հայրենի քաղաքի փրկությունը, ընտանիքով վերադարձանք: Չնայած հայրական օջախը կիսաքանդ էր թուրք ոխակալների կողմից, մենք չհուսահատվեցինք և երդվեցինք, որ նվիրումով կմասնակցենք հայոց քանքարների ոստան Շուշիի կրթամշակութային վաղեմի փառքի վերականգնման հայրենանվեր հևքին:

1994թ. Շուշի էր եկել Կարեն Յուզբաշյանը ֆրանսիական ներկայացուցիչների հետ. փնտրել ու գտել էր մեզ՝ ողջունելով հայրենի քաղաքի հերոսական ազատագրումը:

1998թ. նոյեմբերի 20-ին ընտանիքով ցավով լսեցինք հայերիս նվիրյալ Գալինա Ստարովոյտովայի ողբերգական մահը չարագործ մարդասպանի կողմից:

2001թ. մայիսին ԼՂՀ կրթության և գիտության նախարար Համլետ Գրիգորյանի նախաձեռնությամբ հրավիրվեց Շուշիի ռեալական ուսումնարանի 120-ամյակին նվիրված գիտաժողով, որին մասնակցում էր նաև Կարեն Յուզբաշյանը: Հանդիպեց մեզ, ցնծությամբ ընդունեց Շուշիի ազատագրումը: Նա հետաքրքրվեց մեր գերդաստանի առօրյայով և հեռանկարով:

Ցավով հիշեցինք Գալինա Ստարովոյտովայի չարաճաճ մահվան միջադեպը, երախտանքով՝ նրա վառ հիշատակի պահպանումը:

Յուզբաշյանն առաջարկեց Ռեալական ուսումնարանի հոյակերտ կոթողի վերականգնման անհրաժեշտությունը, խորհուրդ տվեց հատկացնել հատուկ անկյուն՝ նվիրված Գալինա Ստարովոյտովային՝ ի հիշեցումն 1984 թվականի ամռան:

2009-ի նոյեմբերին Սանկտ Պետերբուրգում էր ԼՂՀ վաստակավոր մանկավարժ, Շուշիի պատվավոր քաղաքացի, նվիրյալ արցախցի, Խաչատրյան գերդաստանի արժանի զավակ, երջանկահիշատակ Ալբերտ Խաչատրյանը: Մարդկային վեհ գաղափարներով օժտվածը քաղաքացիական պարտք համարեց այցելել հայ ժողովրդի լավագույն բարեկամների շիրիմներին, մատուցել հարգանքի տուրք ի խորոց սրտի հիշողության: Ի դեպ, Գալինա Ստարովոյտովան թաղված է Սանկտ Պետերբուրգի Նիկոլսկու գերեզմանատան Ալեքսանդրո-Նևսկի ծառուղում:

Նրա շիրմից աջ Սանկտ Պետերբուրգի նախկին քաղաքապետ Անատոլի Սոբչակի գերեզմանն է: Նրա անունը հայերիս ծանոթ է 1989-ից, երբ Սոբչակը 1989թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունների ժամանակ ժողպատգամավորների համագումարին ադրբեջանական պատվիրակությունը հրաժարվում էր տեղ հատկացնել Լեռնային Ղարաբաղից հայազգի ներկայացուցչին: Այդ ժամանակ Անատոլի Սոբչակն առաջարկեց Գերագույն խորհրդում իր տեղը զիջել հային:

Ալբերտ Խաչատրյանը Սանկտ Պետերբուրգի Սմոլենսկի հայկական գերեզմանոցում հարգանքի տուրք է մատուցել անվանի շուշեցի Կարեն Յուզբաշյանի գերեզմանին: Նա մահացել է 2009թ. մարտի 5-ին:

Այսօր էլ արցախցու երախտանքով ու պատկառանքով ենք հիշում մեր Գոյապայքարի ահեղաշունչ պահերին մեզ սատարող բարեկամներին:

Թող միշտ բարձր հնչի նրանց անունը, անթառամ ու պայծառ մնա նրանց հիշատակը:

Ի խորոց սրտի հիշողության՝

Լարիսա ՂԱՋԱՐՅԱՆ
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ
ք. Շուշի

ՄԵՐ ԱՆԱՂԱՐՏ ԵՐԹԻ ՊԱՀԱՊԱՆԸ

Արևի՛ նման նայեցեք աշխարհին. – Մարդկանց նկատմամբ հավասարապես բարի՛ եղեք: Ծագումը. = Հովհ. Թումանյանի խոսքը. «… Արևն է ինքը (բանաստեղծությունը) և իր հայացքն արևի, և ամեն մռայլ չքանում է նրա հայացքից: Արևի նման նայեցեք աշխարհին» («Խոսք պատանիների երեկույթին»):

Վերջում մասնակից դասարանները ներկայացրին հայկական ժողովրդական հեքիաթներից ընտրած դրվագների նկարները: Աշակերտները հանդես էին բերել իրենց ձիրքն ու շնորհքը: Նկարներն աչքի էին ընկնում իրենց գունային խաղերով:

Կազմակերպված միջոցառումների շարքը հետապնդում էր շատ կարևոր նպատակներ՝ մեր ազգային արժեքների պահպանում ու փոխանցում հետագա սերունդներին և սովորողների ստեղծագործական մտածողությամբ ձևավորում: Ինչ էլ որ լինի, այդ մրցույթների ընթացքում երեխաները շատ բան սովորեցին, ընկալեցին, որ թիմային՝ կոլեկտիվ աշխատանքում կարևոր է ամեն մեկի ներդրումը, ինչն էլ կապահովի իրենց թիմի հաջողությունն ու հաղթանակը: Նրանք պարտավորվեցին սերտել հայերենը, որ չդառնան կես մարդ, թշվառ ու ծառից պոկված տերև… Միևնույն ժամանակ սովորողները կարողանում էին տարբերակել գրական հայերենն ու բարբառը: Չնայած ամեն բարբառ ունի իր համն ու հոտը, գույնը, հրապույրը, և չնայած որ նրանք մեր լեզվի հարստությունն են, այնուամենայնիվ, չպետք է թույլ տալ, որ բարբառները իրենց անկոչ միջամտություններով խաթարեն գրական հայերենը: Միշտ պետք է լավ հիշել Լևոն Հախվերդյանի այս խոսքերը:

Ամենակարևոր հանգամանքը եղավ այն, որ հայ մանուկները կարողացան գնահատել հայերենի դերը մեր հազարամյակների պատմության ընթացքում.

Ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, դարձրինք աստված,

Թեև գիտեինք, որ աստվածները զոհ են պահանջում,

Եվ Ավարայրում ընկանք արնաքամ, ընկանք ծվատված,

Բայց չզիջեցինք և ոչ մի հնչյուն:

Վ.Դավթյան

Պատմության քառուղիներով բռնեցինք Դեր Զորի ճամփան, մեր կեսը տվինք, բայց մեր լեզուն չտվինք: Պատահական չէ, որ ֆրանսիացի լեզվաբան, հայագետ Անտուան Մեյեն այսպես է արտահայտվել մեր ժողովրդի ու մեր լեզվի մասին. «Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել և ավելի խնամքով չի մշակել իր սեփական լեզուն, քան հայ ազգը»:

Ասկերանի միջնակարգ դպրոցում կայացած միջոցառումների այս շարքը վկայում է, որ մեր լեզվի զարգացման, պահպանման գործում մեծ է ոչ միայն կրթօջախի, այլև քաղաքապետարանի դերը: Ասկերանի քաղաքապետի պաշտոնակատար Հայկ Շամիրյանը նախապես խոստացել էր, որ մրցույթն ամփոփելու օրը անակնկալ է մատուցելու երեխաներին: Եվ քանի որ Մայրենիի շաբաթը համընկնում էր զուգահեռ ընթացող տոնական օրերին՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 151-րդ տարեդարձ, Գիրք նվիրելու ավանդական տոն, նա սիրով կատարեց իր խոստումը՝ մասնակիցներին հանձնելով գեղարվեստական գրքեր ու պատվոգրեր, հաղթած դասարանին էլ՝ պատվոգիր ու նվեր:

Մայրենիի պահպանությունը ազգային խնդիր է, հետևաբար, նրանով պիտի շահագրգռված լինենք բոլորս, ազգովի.

Եվ տանենք պիտի իբրև առաջին հավատք ու աղոթք,

Եվ տանենք պիտի իբրև սրբազան հաց, գինի ու հուր…

Եվ հիշենք, որ երբ «Հայրենիք» ասինք հողին այս քարոտ,

«Մայրենի» դրինք անունը քո սուրբ:

Վ.Դավթյան

Աչքի լույսի պես պահպանենք ու գնահատենք մեր անգին գանձը:

Ս. ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ԱՆԻՈՒՄ» ԳՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոնը փետրվարի 21-ին Ստեփանակերտում՝ կազմակերպությամբ Արցախի Ժուռնալիստների միության, նախաձեռնել էր Արտաշես Վրույրի «Անիում» աշխատության երրորդ հրատարակության և անգլերեն հատորների շնորհանդեսը:

Միջոցառմանը ներկա էին լրագրողներ, գրողներ, պատմաբաններ, հասարակական-քաղաքական գործիչներ Ստեփանակերտից, Շուշիից, Ասկերանից, Հադրութից:

Միջոցառումը տեղի ունեցավ Արցախի Ժուռնալիստների միության հարկի տակ: Այն բացեց միության նախագահ, գրող և լրագրող Կիմ Գաբրիելյանը: Խոսք ասացին պատմաբան Մհեր Հարությունյանը, գրող և լրագրող Դավիթ Միքայելյանը, լուսանկարիչ Վալերի Պետրոսյանը:

Գիրքը ներկայացրեց ԱՆԻ կենտրոնի համակարգող Թաթուլ Հակոբյանը և պատասխանեց ներկաների հարցերին:

Այս գիրքը Բագրատունյաց չքնաղ մայրաքաղաք Անիի վերջին բնակիչների և վերջին վանահոր՝ Հայր Միքայելի մասին է: Հայրենիքին նվիրյալ այս հոգևորականը, որ ծնունդով Արցախից էր, վերջիններից մեկը լքեց Անին, երբ 1918-ի ապրիլին թուրքական զորքերը գրավեցին ավերակների քաղաքը:

Շնորհանդեսի ավարտին Արցախի Ժուռնալիստների միությունը ներկաներին հյուրասիրեց Արցախի գինի և ժենգյալով հաց:

Հայկական ուսումնասիրությունների «ԱՆԻ» հիմնադրամ

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈԽԱՐԵՆ

ՏԱՍՆԵՐԵՔ ՀԱՐՑ՝ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Գարունդ հայերեն է գալիս»,- հնչում է այդ հուզառատ աղջկական ձայնն իմ դպրոցական հուշերից: Բեմում դպրոցի լավագույն ասմունքողն է, որը տարիներ անց հայոց լեզվի հանդեպ իր սերը կբնորոշի որպես տիեզերական. «Ես նրան տրվել եմ առհավետ, սիրում եմ առանց վերապահման, ինքնամոռաց ու կուրորեն, ինչպես մորն են սիրում»: Հենց այդ սերն ու մայրենիի իր ուսուցիչ Սուրայա Ղազարյանի ոգեշնչող օրինակը մի օր նրան տարան ԱրՊՀ հումանիտար ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժին: «Երբեք չեմ ափսոսացել ընտրությանս համար: Երբեմն թվում է, թե այլ աշխատանք չեմ էլ կարող անել: Ամեն օր մանրաքայլ առաջ եմ գնում, իսկ հաջորդ քայլն անելուց պարզվում է, որ դեռ խորանալու շատ տեղ ունեմ լեզվի անհատակ գանձարանում»:

Իմ զրուցակիցը Խնապատի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գայանե ԱՂԱԲԱԲՅԱՆՆ է, որը 2005 թվականից զբաղեցնում է ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնը:

Նշանակություն չունի, թե ինչպիսին են մարդու նպատակները, մտադրությունները, համոզմունքները, նրան դատելու են ըստ իր գործերի:

Բիչեր

- Դժվա՞ր էր ընդունել փոխտնօրենի պաշտոնը ստանձնելու որոշումը՝ հաշվի առնելով, որ պիտի ղեկավարեիք Ձեզ դասավանդած ուսուցչական կոլեկտիվը:

- Այս պահին նախանձում եմ 25 տարեկան Գայանեի համարձակությանը: Ընդամենը 5 տարվա աշխատանքային փորձ ունեի, ու որոշումս մինչև վերջ գիտակցված չէր: Այն ժամանակ ոգևորված էի, որ պիտի գլուխկոտրուկ հիշեցնող դասացուցակն ինքս կազմեմ, դասալսումներ կատարեմ, բայց ոչ՝ ղեկավարեմ: Հիմա եմ հասկանում, որ անգիտակցաբար ահռելի պատասխանատվություն ուսերիս առա:

- Մինչ Դուք մայրենիի դիրքերն էիք ամրապնդում դպրոցում, Ձեր ամուսինը դիրքերում հայրենիքի անվտանգությունն էր ամրապնդում: Ինչպե՞ս էր անդրադառնում Ձեր աշխատանքին սպայի կին լինելու հանգամանքը:

- 2016թ. դժնդակ ապրիլին, երբ օրերով անգամ լուր չունեի սահմանին կանգնած ամուսնուցս ու, թվում էր՝ մոլորակը գլխիվայր շրջվում է, վերապրած սարսափը ստիպեց վերահմաստավորել ողջ կյանքս: Հիշեցի հորս խոսքերը իմ ամուսնության նախօրեին. «Սպայի կին լինելը ծանր փորձություն է: Պետք է պատրաստ լինել ցանկացած ֆորս-մաժորի»: Արդեն հայտնվել էի ռուսական «Офицеры» ֆիլմի կանանց դերում, երբ լիովին ընկալեցի հորս խոսքերը: Բայց դա ինձ օգնեց աշխատավայրում իմ առաջ ծառացած խնդիրները լուծել անտրտունջ: Չէ՞ որ ես լրացնում էի ամուսնուս գործը՝ սերունդներին հայեցի դաստիարակություն տալով:

- Ինչպե՞ս եք վերաբերվում բոլոր փոխառված բառերն անպայման հայերեն համարժեքով փոխարինելու ժամանակակից միտումին: Արդյո՞ք դա մայրենին անաղարտ պահելու գրավականն է:

- Չէի ասի, որ դա է լեզուն անաղարտ պահելու գրավականը, բայց լեզուն հայացնելու միտումը հաճելի է: Չնայած այստեղ ևս երբեմն հանդիպում ենք ծայրահեղությունների:

- Այսինքն՝ կան նմանատիպ բառեր, որոնք չե՞ք հավանում:

- Ավելի ճիշտ կլիներ ասել՝ առայժմ խորթ թվացող բառեր, ինչպիսին է, օրինակ՝ «եզրույթ»՝ *տերմին* բառը: Բայց դրա կողքին կա «գեղարար»՝*դիզայներ*-ը, որն ականջ է շոյում: Լեզվի բնականոն զարգացում է այս երևույթը, ու ամեն մի նորի պես դա էլ ընդունվում է դժվարությամբ:

- Արժե՞ ուղիներ փնտրել գեղարվեստական գրականության հանդեպ հետաքրքրություն առաջացնելու համար, թե՞ համացանցը լիուլի բավարարում է այսօրվա դպրոցականի ընթերցասիրության պահանջը:

- Տեղեկատվական աղբյուրների հորդառատությունն է պատճառը, որ այսօր ոչ միայն դպրոցականը, այլև ողջ հասարակությունն է հեռու գրքից: Դպրոցականը կարդում է միայն այն, ինչն իրեն խիստ անհրաժեշտ է՝ կապված ապագա մասնագիտության հետ: Նա մեզնից պիտի սովորի ընթերցելը: Նա պիտի տեսնի ընթերցող հայրիկ ու մայրիկ, ընթերցող ուսուցիչ: Ու միգուցե ինքն էլ որոշի սուզվել այդ անեզր տիեզերք…

- Եվրոպական որոշ երկրներում գրականությունը չի մտնում պարտադիր ուսումնասիրվող առարկայացանկի մեջ: Գուցե արժե՞ մեզ մոտ ևս կիրառել այդ փորձը:

- Գրականությունը չպիտի լքի պարտադիր առարկայացանկը: Միգուցե Ֆինլանդիային կամ Նորվեգիային այնքան էլ չի վախեցնում ազգային դիմագիծը կորցնելու վտանգը, բայց մեզ մոտ այլ արժեհամակարգ է ու այն էլ՝ փխրուն: Հայ գրականությունը ազգային զենքերից մեկն է, իսկ պատերազմող ժողովուրդը զենքը ձեռքից ցած դնելու իրավունք չունի:

- Ի՞նչ է տալիս դպրոցին ամենամյա Մայրենիի միամսյակը:

- Առաջին հերթին՝ ոգևորություն, ինչն արդեն իսկ մեծ հաջողություն է ուսման հանդեպ համընդհանուր անտարբերության դարաշրջանում: Խաղեր, մրցույթներ, կլոր սեղաններ, բեմադրություններ, ընդօրինակման դասեր և այլ տարաբնույթ միջոցառումներ: Ամեն տարի որևէ նորամուծություն ենք կատարում աշխատանքային պլանում: Ձգտում ենք մեր հնաբառ լեզվի պերճանքն օգտագործել ու զարմացնել համացանցում ամեն ինչ տեսած ու լսած աշակերտին:

- Իսկ թերացում լինո՞ւմ է այդ գործում:

- Թերևս միակ թերացումն այն է, որ առայժմ չի հաջողվում ներգրավել բոլոր ուսուցիչներին: Ոմանց թվում է, թե Մայրենիի միամսյակը լեզվի ուսուցչի հոգսն է: Մանկավարժը պիտի գիտակցի, որ Մայրենիի միամսյակը հոգս չէ, այլ ազգային պարծանք, որից ինքը չպիտի անմասն մնա:

- Դպրոցում կա՞ն աշակերտներ, որոնց մեջ Դուք տեսնում եք մայրենիի ապագա նվիրյալների:

- Կան հայոց լեզվի սիրահարներ, սակայն ներկայիս դպրոցականը հազվադեպ է նախապատվություն տալիս ուսուցչի մասնագիտությանը: Ճիշտ է, ես չեմ կիսում այն կարծիքը, իբր հասարակության մեջ փոխվել է ուսուցչի հանդեպ վերաբերմունքը: Ակնածանքն այս աշխատանքի և ուսուցչի անձի նկատմամբ կա ու միշտ էլ կլինի: Այլ հարց է, որ ուսուցչի սոցիալական խնդիրները գլխապտույտ թանկացումների անվերջանալի շարանում մնում են չլուծված, ու դրա ականատեսը տարիներ շարունակ դառնում է աշակերտը: Եզրահանգումը պարզ է:

- Ի՞նչ եք կարծում, Ձեր կոլեկտիվը պատրա՞ստ է ընդունել կրթահամակարգի սրընթաց փոփոխվող մարտահրավերները:

- Մասնակցել եմ «Արցախի կրթական ֆորում-2019»-ին: Վերադարձել եմ այն խորին համոզմամբ, որ կրթության նոր տեսլականը շատ մոտ է: Սարեր շուռ տալու պատրաստ ոգևորությունս շուտով թևաթափ եղավ՝ բախվելով կոլեկտիվի թերահավատությանը արտահայտածս գաղափարների հանդեպ: Հասկացա, որ կրթության մեջ անհիմաստ է տեսլականներ սահմանելը, քանի դեռ ուսուցիչը պատրաստ չէ դուրս գալ խստաբարո ու անթերի գերբնական անձի իր կաղապարված կերպարից, որը միգուցե իդեալական էր խորհրդային, բայց ոչ՝ այսօրվա դպրոցի համար: Մենք չենք ուզում սովորել՝ ելնելով մարտահրավերների պահանջներից, այլ փորձում ենք մարտահրավերները համապատասխանեցնել մեր կարողություններին: Թե՛ իմ, թե՛ ցանկացած մեկ այլ արցախյան մանկավարժական կոլեկտիվ պետք է աշխատի կամուրջ կառուցել այն անդունդի վրայով, որ առաջացել է սովորելու մեջ իմաստ չտեսնող աշակերտի և այդ նույն աշակերտի չսովորելու պատճառը չհասկացող ուսուցչի միջև:

- Դուք երկու հրաշալի ուսուցիչ-ծնողների դուստր եք, որոնք իրենց անջնջելի հետքն են թողել ոչ միայն մեր դպրոցի, այլև շրջանի մանկավարժության պատմության մեջ: Որքանո՞վ է դա պարտավորեցնող:

- Դեռևս աշակերտական նստարանից դա զգոնություն էր ներշնչում, հակառակ գոյություն ունեցող այն թյուր կարծիքի, որ դասատուների երեխաներն արտոնյալ դասակարգ են դպրոցում: Հավատացնում եմ, որ պատկերը լրիվ այլ է: Իսկ արդեն ուսուցչի կարգավիճակում դա ինձ թևեր տվեց, ստիպեց ինձ հետ չընկրկել՝ հանդիպելով հերթական հիասթափությանը: Հիմա էլ ամեն անգամ հիշելով, որ նրանք հպարտանում էին ինձնով, ավելի ու ավելի եմ պարտավորված զգում:

- Ըստ Ձեզ՝ ինչո՞վ է տարբերվում մայրենիի ուսուցիչը մյուս ուսուցիչներից:

- Ինչով սպայի կինն է տարբերվում մյուս կանանցից: Անհամեստություն չհնչի, բայց՝ մի գլուխ բարձր մյուսներից: Նկատի չունեմ մարդկային ինչ-որ առանձնահատուկ արժանիքներ, որոնցով օժտված չեն ուրիշները: Քա՛վ լիցի: Ոչ մեկի կարևորությունը նսեմացնելու նպատակ չեմ հետապնդում, ոչ էլ նման իրավունք կվերապահեի ինքս ինձ: Մայրենիի ուսուցիչը լուսացան առաքյալ է, որին վստահված է հայերենը սրբություն սրբոց դարձնել ամեն մի երեխայի հոգում:

- Ամեն ինչից զատ Դուք նաև երեք զավակների մայր եք, ինչպիսի՞ն է հայ ժողովրդի ապագան հայ մոր աչքերով:

- Մեր ապագան մեր լեռներում է ու նման է մեր լեռներին:

Տիկին Աղաբաբյանը հայացքը հառում է դեպի պատուհանը, որտեղ խրոխտ սահմանապահի պես վերից վար խնապատցու անդորրն է հսկում Կարմիր քերծը: Կարճատև լռության մեջ լսվում է ձնհալի կաթոցը:

- Ձյուներդ հայերեն են լալու,- սահյանական վստահությամբ եզրափակում է նա:

Մեդինա ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանի 90-ամյա հոբելյանի կապակցությամբ գրական միջոցառում անցկացվեց Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում: Այն ներածական խոսքով բացեց գրադարանի տնօրեն Անահիտ Բաղրյանը՝ ընդգծելով, որ Ս. Խանյանն այն երջանիկներից է, որի 90 տարիներից 70-ը անցել են ստեղծագործական աշխատանքում:

Բոլոր ելույթ ունեցողներն իրենց տեսանկյունով բացատրեցին հոբելյարի այս առանձնաշնորհի գաղտնիքը:

ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ Կարինե Ալավերդյանի համոզմամբ՝ նրա հենց միայն այս ֆենոմենալ հատկությունը արժանի է մեծագույն հարգանքի. «Մեզ համար նշաձող է հասկանալու, որ մարդկային հնարավորությունները սահմանափակ չեն, և մարդն է տնօրինում իր կյանքը: Իհարկե, դրանում շատ մեծ նշանակություն ունեն գեները և Աստծո տված շնորհը, բայց պակաս կարևոր չէ, թե ինչպիսի բնավորություն ունի մարդը, նրա էությունը, նրա լավատեսությունը, կյանքը սիրելու նրա այդ մեծ կարողությունը: Նա կարողանում է արժանապատվորեն ընդունել ճակատագրի հարվածները, հաղթահարել ցավը, փիլիսոփայորեն մոտենալ կյանքի բոլոր շրջադարձերին, շարունակել ապրել և արարել: Իսկ սա հատուկ է միայն կամքով և հոգով ուժեղ մարդկանց»:

Ժողովրդական արտիստ, ռեժիսոր Լեոնիդ Հարությունյանի գնահատմամբ՝ Խանյանը թելադրող է իր վաստակով, տարիների բարձունքից, բայց ոչ՝ իր անձնական զանգակատնից, ունեցած հարաբերություններից:

ԱրՊՀ ժուռնալիստիկայի և արտաքին կապերի վարչության պետ, բանասիրական գիտությունների թեկնածու Զարիհե Սաքաջյանի համոզմամբ՝ «Խանյանն իր ապրած կյանքով հարուստ հետագիծ է թողել և շարունակում է թողնել, բայց ասելիքը կարծես դեռ թերի է: Նրա հետ յուրաքանչյուր հանդիպում վեր է ածվում դասի, դաս՝ գրականության, դաս՝ կյանքի: Նա լավ ուսուցիչ է, լավ ընկեր և ամենակարևորը՝ լավ մարդ: Ս. Խանյանի պոեզիան ամբողջությամբ Արցախ է: Նրա ստեղծագործություններում մենք տեսնում ենք ազատության համար պոռթկացող, պատմական ճշմարտությունը վերահաստատելու մղումով հրապարակ դուրս եկած, իր կյանքը մարտի դաշտում զոհաբերող արցախցուն, իր բնօրրանում ապրելու իրավունքի համար մարտի դուրս եկած հային»: Բանախոսի կարծիքով՝ մամուլը, գրականագիտությունը սակավախոս են Խանյանի հանդեպ, և համոզված է, որ ճշմարիտ գնահատանքի ժամանակներն էլ կգան:

«Հասկերով ու վարդերով հյուսված քնար». այսպես բնութագրեց Ս. Խանյանի պոեզիան բանաստեղծ Ռոբերտ Եսայանը: Խանյանի համար «կյանքի դուռը սերն է, որը բացում է դեպի անհայտը, որ գաղտնիք է, երգ է, ծիածանի հմայք, գոյի շնչառություն: 90 տարիների հեռվից նայելով իր կյանքի ճանապարհին՝ բանաստեղծը խորհում է. իսկ եթե ինքը ծնվեր ոչ թե 1930 թվին, այլ մեր օրերում՝ ի՞նչ պիտի փոխվեր.

Ոչինչ չէր փոխվի իմ երակներում.
Կապրեի՝ կառչած արցախահողին,
Սեղանիս վրա՝ վարունգը թթու,
Ժենգյալով հացը և գիժ թթօղին:

ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծուհի Տաթև Սողոմոնյանը արժևորեց Ս. Խանյանին որպես բառի և ստեղծագործողի արժեքն իմացող մտավորականի և նրան շնորհավորեց հոբելյանի առթիվ իր գրած բանաստեղծությամբ:

ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Սիրուն Բաղդասարյան. «Աստված շատ բարեհաճ ու լիաբուռն է եղել Ձեր հանդեպ. տվել է իմաստուն միտք, անխոնջ աշխատասիրություն, մի քանի երաժշտական գործիքներով նվագելու շնորհք, պատասխանատվության մեծ զգացում, մարդկանց օգնելու մեծ պատրաստակամություն, տվել է մի լայն սիրտ՝ լցված անսահման սիրով»:

Ս. Խանյանի բանաստեղծությունների արտասանությամբ հանդես եկան դերասանուհի Ռուզաննա Գասպարյանը, Սիրուն Բաղդասարյանը, որը նաև երգեց, ԱրՊՀ ուսանողները:

Հոբելյարի խոսքն էլ անկեղծ էր. «Թող անհամեստություն չթվա, շատ եմ ստեղծել, ոչ ոք Ղարաբաղում չի կարող մրցել ինձ հետ և՛ տարիների, և՛ կուտակումների առումով: Թումանյանն ասել է, որ ամենամեծ քննադատը ժողովուրդն է, ժամանակակիցները չեն կարող իրար գնահատել»:

Հոբելյարը կարդաց իր նոր բանաստեղծությունները և իր անձնական գրադարանից գրքեր նվիրեց հանրապետական գրադարանին:

Սեփ. լրատվություն

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՐԲ ՍԻՐԵԼԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Ինչպես բազմիցս նշել ենք, արցախյան մարզաշխարհում զգալի դեր ունեն արեւելյան մարտարվեստները: Դրանցով պարապող մարզիկները արհեստավարժ ու բանիմաց մարզիչների նվիրված աշխատանքի շնորհիվ սովորում են պահպանել առողջ ապրելակերպի սկզբունքները, դառնալ ֆիզիկապես եւ հոգեպես կոփված մարդ, իրենց կարողանում են դրսեւորել կոլեկտիվում, կարգապահ եւ ընկերասեր են: Այս հատկություններով օժտված մարզիկը բանակում ավելի լավ է կարողանում ինքնադրսեւորվել (մեր ժամանակի օրախնդիրներից մեկը) եւ կատարել իր առջեւ դրված մարտական խնդիրը՝ չնահանջելով դժվարությունների առջեւ:

Մեր հերթական զրուցակիցը Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի մարզիչ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ֆիզկուլտուրայի դասախոս, Ստեփանակերտի 8-րդ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ Սասուն ԲՐՈՒՏՅԱՆՆ է: Կիոկուշին կարատե դո մարզաձեւով ներկա պահին նրա մոտ կոփվում է շուրջ 70 մարզիկ՝ մայրաքաղաքում եւ հանրապետության շրջաններում՝ սկսած չորս տարեկանից: Մանկավարժ եւ մարզիչ Սասուն Բրուտյանի հետ բովանդակալից հարցազրույցում պարզաբանեցինք կիոկուշին մարտարվեստի պարապմունքներին եւ դրանով պարապող մարզիկներին վերաբերող թեմաներ:

Ծնվել է 1993թ. Հադրութի շրջանի Ակնաղբյուր գյուղում: Ավարտել է Ստեփանակերտի 3-րդ դպրոցը: Դպրոցական տարիներին պարապել է թաեքվոնդո: Ինչպես ինքն է նշում՝ կիոկուշին կարատեի պարապմունքներն սկսել է աշխարհի եռակի չեմպիոն Արթուր Առուշանյանի դրդմամբ: Երբ Սասունն ավարտական դասարանում էր, Արթուրը նրանց դասարան տեղափոխվեց, որն այդ ժամանակ ակտիվ մարզվում էր կիոկուշին կարատեով: Տեսնելով, որ այդ մարզաձեւն ավելի հարմար է իրեն, Սասունն սկսեց դրանով պարապել Արթուրի հետ միասին այդ ժամանակ Արցախում միակ մարզիչ Սուրեն Աբրահամյանի մոտ: Դասընկերները դարձան մարզական ընկերներ: Այդպես սկսվեց Սասուն Բրուտյանի ճանապարհը դեպի կիոկուշինի աշխարհ: Կոփվելով այդ մարզաձեւում ու լավագույնս իրեն դրսեւորելով՝ շուտով սկսեց մտածել մարզչական գործունեության մասին: Դրա համար ընտրեց այնպիսի մասնագիտություն, որը կօգներ նրան երեխաների հետ աշխատելու համար, ինչպես նաեւ կխթաներ մանկավարժության եւ ֆիզիկական դաստիարակության մասնագիտական հմտություններ ձեռք բերելուն: Ընդունվեց ԱրՊՀ ՆԶՊ եւ Ֆիզիկական դաստիարակության բաժինը, միաժամանակ պայմանագրային հիմունքներով ծառայության մտավ ՊԲ շարքերը: Ուսանողական տարիներին շարունակում էր այդ մարզաձեւով պարապել: Արցախում կազմակերպվող կիոկուշին կարատեի առաջնությունների ժամանակ հանդես էր գալիս որպես մրցավար: Մասնակցել է ՀՀ-ում կազմակերպված բաց առաջնության եւ մրցանակային տեղ զբաղեցրել: Շուտով ստեղծվեցին պայմաններ, եւ հնարավոր դարձավ համատեղել սիրած զբաղմունքն ու աշխատանքը: Զինվորական ծառայության պայմանագիրն ավարտվելուց հետո 2016-ից սկսել է մարզչությամբ զբաղվել եւ որպես Արցախի «Օյամա» կիոկուշինկայ կարատե դո ֆեդերացիայի մարզիչ՝ առաջին պարապմունքներն սկսել Նորագյուղում: Նրա սաները կարճ ժամանակում բավականին հաջողություն ունեցան: Հիշարժան է նրանց առաջին մասնակցությունը Ստեփանակերտում կազմակերպված կիոկուշինի առաջնությանը, որի ընթացքում Սասուն Բրուտյանի քսան մասնակից սաներից 19-ը դարձան մեդալակիր: Որոշ ժամանակ անց նա խումբ ունեցավ նաեւ մայրաքաղաքում: Առ այսօր Սասուն Բրուտյանը սիրով շարունակում է մարզչական գործը, ինչպես նաեւ դասավանդում ֆիզկուլտուրա առարկան:

- Սասո՛ւն, մարզչի համար պարտադի՞ր է մանկավարժ լինելը:

- Այո, մանկավարժության սկզբունքների իմացումը մարզչի աշխատանքի հիմքն է կազմում: Հատկապես այն մարզիչները, որոնք աշխատում են երեխաների հետ, պետք է իմանան մանկավարժության սկզբունքները, երեխաների տարիքային առանձնահատկությունները, նրանց հոգեբանական կողմերը: Ճիշտ է, մեծ նշանակություն ունի, թե մարզիչն ինչքանով է լավ տիրապետում իր կողմից մատուցվող մարզաձեւին, ինչպես նաեւ, թե ինչ աստիճանի է նա հասել իր մարզաձեւում: Բայց միայն լավ տիրապետելն ու չեմպիոնական տիտղոսը բավական չեն լավ մարզիչ դառնալու համար: Կարեւոր է, որ մարզիչը լինի բազմակողմանի զարգացած եւ տիրապետի մանկավարժության նորմերին:

- Ի՞նչ չափորոշիչներ կան, որոնք պետք է հաշվի առնել մարզիչ ընտրելիս:

- Մարզչի աշխատանքի արդյունքը նրա մարզիկների ֆիզիկական եւ մտավոր լավ վիճակն է, մարզաձեւին տիրապետելու բարձր մակարդակը: Կարելի է հետեւել պարապողների մարզական վիճակին, նրանց կարգապահությանը դրսում, դպրոցում: Կարելի է ուշադրություն դարձնել, թե տվյալ մարզչի մոտ պարապող մարզիկներն արդյո՞ք միշտ նույնն են, թե հաճախակի փոխվում են: Եթե նկատեք, որ մարզիկը թողել է տվյալ մարզչի պարապմունքները, տեղափոխվել ուրիշ մարզչի մոտ կամ դադարեցրել պարապմունքները, կարելի է պարզել, թե ինչու: Իսկ լավագույն տարբերակն անմիջապես մարզչին մոտենալն ու նրա պարապմունքը նայելն է, ինչու չէ, նաեւ հետաքրքրող հարցերին նրանից պարզաբանումներ ստանալը: Մեր ֆեդերացիայում պարապմունքները բաց են: Ցանկացողները կարող են այցելել եւ անձամբ պարզաբանումներ անել թե՛ մարզչի եւ թե՛ մարզաձեւի վերաբերյալ:

- Պատահել է, որ որոշ ծնողներից լսել ենք, թե երեխան առաջ չէր գնում այս մարզչի մոտ, հենց տարան ուրիշի մոտ՝ դարձավ չեմպիոն: Ի՞նչ կասեք:

- Առաջ գնալու մասին շատ ծնողների պատկերացումները տարբեր են: Կիոկուշինում առաջ գնալ՝ չի նշանակում, որ երեխան հինգ կամ վեց տարեկանում հռչակվի չեմպիոն: Ընդհակառակը, եթե մարզիչը ծանրաբեռնված գրաֆիկով է աշխատում դեռեւս անպատրաստ մարմին ունեցող եւ չհասունացած հոգեբանությամբ երեխայի հետ նրան չեմպիոն դարձնելու համար, ուրեմն՝ հաշվի չեն առնված մարզիկի տարիքային առանձնահատկությունները, որը կհանգեցնի երեխայի աճի ու կառուցվածքի վրա ազդող բացասական հետեւանքների: Ամեն ինչ ունի իր ժամանակը: Հնարավոր է, որ մարզիչն ավելի լավ է իմանում դա եւ չի ուզում վնաս պատճառել մարզիկի առողջությանը:

- Իսկ ինչի՞ն եք առաջնահերթ ուշադրություն դարձնում, երբ պարապում եք չորս, հինգ կամ վեց տարեկան մարզիկների խմբերի հետ:

- Այդ տարիքի երեխաների հետ աշխատելիս առաջին հերթին փորձում ենք նրանց ընտելացնել պարապմունքի միջավայրին: Աշխատում ենք, որ նրանց մոտ ձեւավորվի կարգապահություն, ընդ որում, ոչ միայն պարապմունքի ժամանակ, այլեւ տանը կամ դպրոցում: Կիոկուշին կարատեով զբաղվող մարզիկը նախ պետք է կարգապահ լինի կյանքի բոլոր բնագավառներում: Դրա հետ միաժամանակ սովորեցնում ենք, թե ինչպես պետք է պաշտպանվել վնասվածքներից: Կիոկուշին կարատեն վնասվածքավտանգ մարզաձեւ է, ուրեմն՝ այդ մարզաձեւում իրեն գտնող մարզիկը պետք է կարողանա պաշտպանվել վնասվածքներից: Ինձ համար ավելի կարեւոր է, որ մարզիկը լինի առողջ, հետագայում չունենա առողջական խնդիրներ: Խստորեն եւ հետեւողական աշխատանք է տարվում մարզիկների առողջ սնվելու ուղղությամբ: Երբ արդեն մարզիկը հարմարվում է եւ հետեւում այդ պահանջներին, գտնվում է պատրաստ վիճակում, նրան ընտրության հնարավորություն է տրվում: Ուզում է մրցաշարի մասնակցել՝ օգնում ենք պատրաստվի:

- Իսկ ինչքա՞ն ժամանակ է պահանջվում, որ մարզիկը պատրաստ լինի:

- Կախված է նրա ըմբռնումից, ընդունակություններից, պարտաճանաչությունից: Մարզիչը, նկատելով, որ եկել է այդ ժամանակը, համապատասխան հրահանգներ է տալիս մարզիկին: Իսկ ընդհանրապես, մարտարվեստում առաջ գնալը չունի սահմանված ժամանակ: Չէ՞ որ նպատակը կատարելագործվելն է, իսկ դրա համար պահանջվում է մի ամբողջ կյանք:

- Արցախում մասսայականացված տարբեր մարտարվեստների մեջ ինչո՞ւ ընտրել կիոկուշին կարատեն:

- Բոլոր մարտարվեստներն էլ ունեն իրենց տեղն ու դերը: Մեր ֆեդերացիայի մարզիչները պահպանում են կիոկուշին կարատեի սկզբունքները՝ դրանք փոխանցելով սաներին: Մարզիկը հնարավորություն ունի դառնալ ֆիզիկապես եւ մտավոր կոփված, առողջ ապրելակերպին հետեւող, կարգապահ եւ պարտաճանաչ քաղաքացի: Այսօրվա կոփված մարզիկը վաղվա հայրենապաշտպան զինվորն է: Կիոկուշին կարատեում մարզվելը հնարավորություն է տալիս հանդես գալ տարբեր մրցահարթակներում, դառնալ չեմպիոններ: Կիոկուշին կարատեի արցախցի մարզիկներն ունեն եզակի հնարավորություն ոչ միայն պարապելու և դասեր քաղելու աշխարհի եռակի չեմպիոն Արթուր Առուշանյանից, այլեւ շփվելու նրա հետ պարապմունքից դուրս: Մեզ մոտ մարզիչ-մարզիկ հարաբերություններն անմիջական բնույթ են կրում: Մարզիչը մարզիկի կյանքում օտար մարդ չէ: Մարզիչն անտարբեր չէ իր սաների առաջադիմության հանդեպ, դպրոցում եւ այլ միջավայրում նրանց պահվածքի հանդեպ: Հաճախակի կազմակերպվող արշավները, զրույցները եւ պարապմունքից դուրս շփումը հանգեցրել է նրան, որ մենք բոլորս մեկ ընտանիքի պես ենք դարձել: Մեզ մոտ կան բոլոր պայմանները լավ մարզիկ ու լավ մարդ ձեւավորվելու համար:

- Ինչպես գիտենք, վերջին ժամանակներս Արցախում օլիմպիզմի գաղափարն է առաջ քաշվում՝ ավելի շատ օլիմպիական մարզաձեւերի զարգացմանը խթանելով: Ի՞նչ եք կարծում, օլիմպիական մարզաձեւերը զարգացնելու միտվածության դեպքում մարտարվեստները հետագա զարգացում եւ մասսայականություն կունենա՞ն:

- Կարծում եմ՝ կունենան: Մարտարվեստների սկզբունքները միշտ համընկել են արցախցու գենի հետ, ինչպես ասում են, դա մեր արյան մեջ է: Ավելի շատ հավանական է, որ կիոկուշին կարատեն կդառնա օլիմպիական մարզաձեւ, քան թե կնահանջի զարգանալ Արցախում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՍԱ ԻՄ ԼԵԶՈՒՆ Է

Օդը հագեցած է հայկական բույրով,
Արևն էլ շողում է իր ողջ վեհությամբ,
Հայոց աշխարհը փայլում է լույսով՝
Մայրենին հնչում է մեծ հպարտությամբ:

Մեր լեզուն թանկ է, թանկ է, սիրելի,
Հոգու սնունդ է անգնահատելի,
Այն մեր կամքն է, մեր ոգին հպարտ,
Նրանով հզոր ենք, նրանով անպարտ:

Թվում է՝ շուրջը լոկ հայերենն է,
Չէ, չի թվում, այդպես է որ կա,
Հողն անգամ հայոց լեզվով է տքնում,
Ծիլերը հայոց լեզվով փսփսում:

Մեղրի պես ծորում է բերանը մանկան,
Խառնվում առաջին կաթին մայրական,
Ծծվում արյան մեջ, նրան խառնվում,
Աչքերում շողում է, ծիծաղում, ծաղկում:

Ու հայը հայ է, ունի իր լեզուն,
Այն ճանաչված է, հարուստ ու բեղուն,
Այն ոսոխի դեմ մի զենք է հատու,
Այն որոտում է հանց ամպրոպ հուժկու:

Անարատ պահեք, մաքուր ու անբիծ,
Օտարածին ոչ մի հնչյուն չխառնեք,
Այնժամ կունենաք հզոր մայրենի,
Ոչ մի լեզվի հետ չենք համեմատի:

Մեր լեզուն այսօր ողջ մոլորակում
Ապրում է անթիվ հայերի սրտում,
Որոնք խոսում են միայն հայերեն,
Որքան ապրում են՝ միայն հայերեն:

Ծնվում ենք հայերեն, ապրում հայերեն,
Երգերս ծնվում են միայն հայերեն,
Նետը մեր լեզվի ոսոխին խոցի,
Իսկ մենք՝ հայերս, ապրենք հայեցի:

ՊԵՂԻ՛Ր՝ ՈՒՐ ԿՈՒԶԵՍ

Իմ Հայաստանի որ մասը պեղես,
Որ քարը շրջես, որ հողը փորես,
Որ ժայռի կուրծքը կրկին մխրճվես,
Անհնարին է հայ գիր չգտնես:

Քարանձավ մտիր կամ վանք հինավուրց,
Կգտնես, անշուշտ, հայագիր տառեր,
Որ գրել են մեր պապերը վաղուց,
Պահել-պահպանել անհաշիվ դարեր:

Խաչքարերը մեր՝ վրան սուրբ գրեր,
Ծաղկանկարներ ու մանրատառեր:
Եվ ո՞ր աշխարհում կան նման գանձեր,
Ո՞վ ունի այդքան խոսուն խաչքարեր:

Քարն անգամ դարեր խոսել է մեզ հետ,
Բացել պատմության էջերը մեկ-մեկ,
Պարտավորեցրել մեր սերունդներին՝
Վեհությամբ տեսնել Հայոց գրերը:

Որքա՜ն վեհություն, որքա՜ն սրբություն,
Մեսրոպյան գրե՛ր, դուք ունեք ձեր մեջ,
Որքա՜ն խաչքարեր, որքա՜ն պատմություն,
Ինչպե՞ս եք պահել ու հասցրել մեզ:

Ի՞նչ մագաղաթ է և ի՞նչ խաչքար է,
Կամ ի՞նչ պատմություն ունեն գրերը,
Այսօր դա գիտի ամեն հայ մանուկ,
Սակայն չգիտի ոսոխը խղճուկ:

ՀԱՅ ԵՆՔ ՈՐ ԿԱՆՔ

Հայաստանն է երկիրը այս,
Կարծես քարե կարկուտ եկած,
Ամեն քարին մի մոմ վառած՝
Սրբավայր է օծել Աստված:
Հայաստանում այս քարքարոտ
Կամքով արի հայ ենք որ կանք,
Հանճարներով սիրակարոտ
Վիշապաքաղ ազգ ենք որ կանք:
Լեռնաշխարհում այս քարքարոտ
Արևածին հայ ենք որ կանք,
Խաղաղասեր ու մարդամոտ
Ստեղծագործ ազգ ենք որ կանք:
Թող աշխարհին հայտնի լինի՝
Հոգով հարուստ հայ ենք որ կանք,
Ծաղկեփնջում մոլորակի
Չթառամող վարդ ենք որ կանք:
Թող աշխարհին հայտնի լինի,
Որ մեկ ազգ ենք, ուր էլ լինենք,
Թող վերջապես աշխարհն զգա՝
Հանճարների երկիր է սա:

Հրանուշ ՄԱՄԲՐԵՅԱՆ
ԱՀ Շահումյանի շրջանի Նոր Ղարաչինարի Ա. Խաչատրյանի անվան մ/դպրոց

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 22.02.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: